№ 156 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13 1907 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13 № 156

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տառատողին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ԼՐԱԳԻՐԸ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ
ԵՐԿՈՒ րուբլի
Մի ամսվայ համար 1 րուբլի

Կարապետ, Գէորգ, Արուսեակ, Աստղիկ և Մարիամ Միրզայեանցները և Կարապետ Միրզայեանցը սրտի խորին կսկիծով յայտնում են ազգականներին, ծանօթներին և ընկերներին՝ առաջինը իր թանգագին որդու, երկրորդները իրանց անմոռանալի եղբօր և վերջինը իր սիրելի հօրեղբօրորդու՝

ՎԱՀԱՆ ՄԻՐԶԱՅԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ նոյեմբերի 11-ին։ Հոգեհանգիստը կը կատարվի չորեքշաբթի, նոյեմբերի 14-ին, երեկոյեան ժամը 5-ին։ Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, նոյեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից (Авлабаръ, Обводный переул., выше Сурпъ-Карапетск. подъема) դէպի Էջմիածնայ ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

ԲԺԻՇԿ
Ի. Ե. ԳՕԿԻԵԼՕՎ
Ընդունում է յատուկ վեներական, միզանցքասեռական, սիֆիլիս, կաշւէ և սեռական թուլութիւն ունեցող հիւանդներին, 9—12 ժ. առաւ. և 5—$7^{1}/_{2}$ ժ. երեկ., Ջղային թուլութեան բժշկելը էլեկտրականութեամբ և ջրաբուժութեամբ։ Михайловская, № 113, Վեցելի հիւրանոցի մօտ, տելեֆօն № 242
(ու. կ. ե.) տ. 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի քանի խօսք. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Տաւրիկեան պալատից. Էջմիածնի շրջանում. Կաթողիկոսի մահվան առիթով կենտրոնական նպաստամատոյց յանձնաժողովի նիստը. Թատրոն և երաժշտութիւն. Նոր-Բայազէտի գաւառի աղէտեալների օգտին. Մի բացատրութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Նամակ Մոսկվայից. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Որտեղ է ճշմարտութիւնը. Նամակ խմբագրութեան. ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

«Մշակի» վերջին երկու առաջնորդող յօդուածները վերաբերում էին մեր երկրի աղէտեալ վիճակին և նպաստ ստանալու անհրաժեշտութեան խնդրին։

Անհրաժեշտ ենք համարում աւելացնել դարձեալ մի քանի խօսք։

Վնասվել են ոչ միայն հայ գիւղացիները, այլ և նրանց կից ապրող ուրիշ ազգերը՝ Թուրքը, քիւրդը, վրացին։

Եւ անշուշտ պետական նպաստը պէտք է օգնութիւն հասցնի բոլոր վնասվածներին։

Այստեղ ազգութեան և ծագման խնդիր չը կայ, այլ վնասվածների, աղէտեալների և կարիքաւորների օգնութեան խնդիր։

Եթէ ամենից շատ վնասվածները հայերն են, այդ այն պատճառով է, որ այս տարի գլխաւոր աղէտը պատահել է լեռնային մասերում, անջրդի տեղերում, ուր հայերը մեծամասնութիւն են կազմում։

Արդարև այս տարվայ ամենախոշոր ձախորդութիւնը երաշտն էր, գարնան անձրևների պակասութիւնը։

Այն տեղերում, ուր արտերը ջրվում են և ուր հացի բերքը անմիջապէս չէ կախված անձրևներից, ստացվեց բաւարար հունձ և գիւղացին կարող եղաւ ապահովել իր համար տարվայ պաշար։

Այդ շրջանում ապրում են մեծ մասամբ Թուրքերը, որոնք և համեմատաբար այս տարի աւելի բաւարար վիճակի մէջ են, քան հայերը։

Լեռնային գօտին, որ այնքան սարսափելի կերպով վնասվեց երաշտից, դժբաղդութիւն ունեցաւ ենթարկվելու և ուրիշ ձախորդութիւնների հարուածներին, այն է կարկուտի, հեղեղի, վաղահաս ձիւնի և ուրիշ պատահարների, որոնց թւում պէտք է հաշւել նաև անասունների ժանտախտը, կճղակացաւը և այլն։

Անկասկած ցանկալի է, որ բոլոր վնասվածների կարիքները պարզված լինեն մանրամասն տեղեկագրերով և վիճակագրական թւերով, որպէսզի վարչական՝ բարձր ատեանները՝ Պետական Դուման կամ մինիստրական շըրջանները, կարող լինեն հեշտութեամբ վճռել նպաստի խնդիրը և որոշել նպաստի քանակը։ Եթէ մենք ունենայինք գեմստվային հիմնարկութիւններ, կամ վիճակագրական մասնաժողովների մի խիտ ցանց, կամ գիտնական ընկերութիւններ, որոնք ժողովում լինէին տեղեկութիւններ տարվայ բերքի մասին, անշուշտ, մենք հնարաւորութիւն կունենայինք աւելի հեղինակօրէն խօսելու և մեր ձայնը հասցնելու հեշտութեամբ դէպի այն ատեանները, որոնցից սպասում ենք աջակցութիւն ժողովրդին։

Շուտով, որքան մեզ յայտնի է, զանազան տեղերից եկած ներկայացուցիչների մի պատգամաւորութիւն պէտք է ներկայանայ կովկասեան Փոխարքային և խնդրէ միջնորդութիւն մինիստրութեան առաջ՝ յատկացնելու մի խոշոր գումար Անդրկովկասի վնասվածների համար։

Եթէ հնարաւոր լինէր այդ պատգամաւորութիւնը այնպէս լիակատար դարձնել, որ նրան մասնակից լինէին բոլոր վնասված շրջանների ներկայացուցիչները, շատ լաւ կը լինէր, բայց լիակատարութեան պատճառով յետաձգել գործը ամենևին ձեռնտու չէ։

Պէտք է աջողեցնել դիմումը օր առաջ և հրաւիրել կառավարութեան ուշադրութիւնը աղէտեալ շրջանի կարիքների վրա։ Առաջին դիմումից յետոյ կարող են լինել և ուրիշ դիմումներ, բայց այժմեանից իսկ պէտք է կառավարութեան առաջ դնել նպաստի հարցը իր բոլոր լրջութեամբ և կարևորութեամբ, որպէսզի ձեռք առնվեն միջոցներ մեղմացնելու աղէտի հարուածները և ազատելու ժողովրդին սովից ու տառապանքներից։

Մեր գաւառական գործողները թող աշխատեն աջողեցնել պատգամաւորութեան առաքումը դէպի Թիֆլիս ընդհանուր դիմումի համար և միևնոյն ժամանակ կարելիին չափ մանրամասն տեղեկութիւններ տան պատգամաւորութեան ձեռքը, որպէսզի նա կարող լինի իր խնդիրքը և խօսքերը վաւերացնել այդ տեղեկութիւններով։

Գաւառական գործողներ, դուք կարևոր դեր ունէք կատարելու, որը և պէտք է ստանձնէք, առանց յետաձգելու։ Դուք բարոյական պատասխանատուութիւն ունէք ձեզ շրջապատող ժողովրդի վերաբերութեամբ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս։ Աթէնքի Թիւրքայ դեսպանին յանձնարարվեց պաշտօնական գրութեամբ իրազեկ անել յունաց կառավարութեան, թէ տեղեկութիւններ են ստացվել, որ յոյն հրոսակախմբեր անցել են մակեդոնական սահմանը։ Բ. Դուռը պատրաստվում է Թիւրքայ դեսպանատներին ուղարկել հրոսակախմբերի վերջին ընդհարումների մասին գեներալ տեսչից ստացված հեռագիրների պատճէնները՝ մեծ պետութիւններին հաղորդելու համար։ («Բիւրօյի Թղթ.»)

Կ. Պօլիս։ Դակկիարի միւթեսարրֆ Ալի-Րիզա էֆէնդին նշանակված է Վանի վիլայէթի վալի։ («Բ. Թ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

(Սեփական Թղթակցից)

Պետերբուրգ, 1 նոյեմբերի

Այսօր բացվում են Տաւրիկեան պալատի դռները ժողովրդական ներկայացուցիչների առաջ, իսկ մայրաքաղաքի հետաքրքիր ազգաբնակութիւնը անտարբեր է դէպի այդ դէպքը։

Անցնելով մայրաքաղաքի փողոցներով դուք չէք նկատի ոչ ոգևորութիւն և ոչ համախմբումներ, իսկ Տաւրիկեան պալատը ահագին օղակով շրջապատված է գինւորներով և ոստիկաններով։ Առաջին և երկրորդ Դումաների բացմանը տասնեակ հազարաւոր ամբոխն ահագին ոգևորութեամբ դիմաւորում էր իր ընտրեալներին և առողջ հաւատով թեւադրում էր նրանց իր վաղուցվայ իղձերը։ «Ամնիստիա», «անպայման ազատութիւն» խօսքերը խառնվում էին իրար, թնդացնում օդը... Իսկ այսօր տիրում է մեռելային լռութիւն, միայն ոստիկանները ամեն մի քայլափոխում ստուգում են տոմսակները։ Միակ հանդիսատեսները, որոնք աչքի են ընկնում, այդ մի խումբ գվարդիական սպաներն են, որոնք Տաւրիկեան պալատին կից մանէժից դուրս են եկել հրճւելու «իսկական» ժողովրդական ներկայացուցիչներով։

Վերջապէս կարողացայ հասնել Տաւրիկեան պալատին, ենթարկվելով ճանապարհին 10 անգամ քննութեան՝ թէ արդեօք տոմսակ ունեմ պալատը մտնելու համար։ Այստեղ նոյնպէս փոփոխութիւն է առաջ եկել. առաջին երկու Դումաների ժամանակ մամուլի ներկայացուցիչները մուտք ունէին գլխաւոր դռներից, պատգամաւորների հետ միասին. իսկ այս տարի ժուռնալիստներին բաժանել են պատգամաւորներից, տարել խցկել են մի փոքր վանդակի մէջ, որտեղից ոչինչ չէ լսվում և ոչ էլ երևում։

Ժուռնալիստներն արդէն իրանց տեղումն են և խմբված մի քանի պատուհանների առաջ, որտեղից երևում են կուլուարները, հետաքրքրութեամբ դիտում են պատգամաւորներին։

Կամաց-կամաց հաւաքվում են պատգամաւորները. ահա նախկին նախագահ Գոլովինը և նախկին քարտուղար Չելնոկովը քաշվել են մի կողմ և դիտում են. նրանցից մի փոքր հեռու կանգնած է Միլիւկովը Պերգամենտի, Կապուստինի և Մակլակովի հետ. սրանք ինչ-որ գործնական հարց են վճռում, որովհետև բոլորի դէմքը լուրջ է և խորհրդաւոր։ Մի ուրիշ տեղ համախմբված են Շինգարեօվը, Չերնօսվիտօվը, Րօդիչևը և այլք, իսկ աջակողմեանները խիտ օղակ կազմած Բօբրինսկու, Րօձեանկօյի, Գուչկօվի, Կրուպէնսկու շուրջը՝ անհամբեր սպասում են, թէ երբ է հասնելու այն րօպէն, երբ պէտք է խեղկատակութիւնները սկսեն, բայց այդ նրանց չէ աջողվում։

Երևում է մինիստրների նախագահ Ստոլիպինը, սենատոր Գոլուբևի և միւս մինիստրների ուղեկցութեամբ. սկսվում է մաղթանքը, որը բաւական երկարում է։ Քահանաները և առհասարակ հոգևորականութիւնը աշխատում են առանձին շքեղութիւն տալ հանդիսին և ձգձգում են մաղթանքը՝ որքան որ կարելի է։ Մաղթանքը վերջանալուն պէս՝ Կրուպէնսկին, Շուլգինը, Բօբրինսկին և Պուրիշկևիչը պահանջում են հիմնը երգել, որը կրկնվում է երեք անգամ։ Արդէն կամաց-կամաց Եկատերինեան դահլիճը դատարկվում է, կադետներն շտապում են նիստի դահլիճը, իսկ աջակողմեանները դեռ խմբված սպասում են՝ գուցէ մինիստրներից կամ պատգամաւորներից մէկը ճառ կարտասանի. բայց Գոլուբևը շտապում է Դումայի նիստը բանալու և փնալու Պետական Խորհրդի բացմանը։

Նիստի դահլիճն այժմ մի փոքր գեղեցկացրել են. առաստաղը ծածկել են շորով և սպիտակ ներկել։ Կախ է արված և հինգերորդ ջահը, որ առաստաղը թափվելու ժամանակ բոլորովին ծածվել և ճմլվել էր։

Դեռ բոլոր պատգամաւորները չեն եկել, և բաւական թւով նստարաններ դեռ դատարկ են, իսկ ծայրայեղ ձախակողմեանների տեղերում ոչ ոք չէ երևում։ Սոց.-դեմօկրատները, աշխատաւորականները, Դաշնակցութեան ներկայացուցիչը և միւս ձախակողմեանները նախօրօք վճռել էին բացման սկզբին ներկայ չը լինել։

Տարօրինակ է տեսնել Միլիւկովին, Րօդիչևին, Պերգամենտին, Մակլակովին սօցիալիստ-յեղափոխականների կամ աշխատաւորականների տեղը նստած, իսկ կադետների նստարանների վրա Րօձեանկօյին, Գուչկօվին և այլ հոկտեմբերեաններին։ Արդեօք այդ պատահական տեղափոխութիւնն աջից ձախ իրականութիւն կը ստանայ թէ ընդհակառակը կադետները ձախից աջ կանցնեն իրանց գործունէութեամբ, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Կադետները բռնել են աշխատաւորականների նախկին տեղերը. այսպէս, օրինակ, առաջին նստարաններում նստած են իրար մօտ Մակլակով, Գոլովին և Միլիւկով. հետևի շարքում՝ Րօդիչև, Լուչիցկի, Պերգամենտ և Աջեմեան. դրանց ետևի շարքում Շինգարեօվ, Կոլիւբակին, Չելնօկով և այլն. այդպիսով կազմել են կադետական ֆրակցիայի կենտրոնը, որպէսզի հարկաւոր եղած դէպքում իսկոյն յայտնի որոշումներ կայացնեն։

Գոլուբևը բաց է անում նիստը կարճ ճառով, յայտնելով որ Կայսրը նրան է յանձնել բացել երրորդ Պետական Դուման և կարծում է, որ սա երկարատև կը լինի։ Ամեն անգամ, հէնց որ Գոլուբևը Կայսրի անունն է տալիս, Կրուպէնսկին և Բօբրինսկին պահանջում են «ուրա», և Դուման թնդում է «ուրայի» ձայներից։

Գոլուբևը կարդում է օրէնքի այն հատուածը, որը պարտաւորեցնում է պատգամաւորներին տալ խոստում հպատակվելու օրէնքին և ստորագրելու դրա համար յատկացված մատեանում, իսկ այն պատգամաւորները, որոնք կը հրաժարվեն ստորագրել, դրանով զրկված են պատգամաւորութիւնից...

Դահլիճը քանի գնում՝ աւելի լցվում է. ձախակողմեաններն արդէն իրանց տեղումն են, և Գոլուբևը հնարաւոր է համարում դիմել նախագահի ընտրութեանը։ Առաջարկվում է նախ թերթիկներով որոշել թեկնածուներին և ապա փակ քուէարկութեամբ ընտրել նախագահին։ Թերթիկներով ստանում են՝ Խոմեակովը 371 ձայն, կոմս Բօբրինսկին (սև-հարիւրեակայինների թեկնածուն) 2 ձայն, Գոլովինը 1 ձայն, և 5 թերթիկ անվաւեր։

Արդէն մի օր առաջ կարելի էր ասել հաստատապէս, որ Խոմեակովը կը լինի նախագահ, և իսկապէս քուէարկութեամբ նա ստացաւ 371 սպիտակ և 9 սև քուէ։

Սօցիալ-դեմօկրատները չէին մասնակցում քուէարկութեան։

Աւելորդ չէ ընդգծել մի հանգամանք. առաջին երկու Դումաների ժամանակ թէ թերթիկներ և թէ քուէներ համարելու համար ձախակողմեանները աշխատում էին ընտրել մեծ մասամբ աջակողմեաններին, իսկ այս անգամ նրանք մինչև անգամ մի կադետի անունն էլ չը տուին, այլ ընտրեցին Բօբրինսկուն, Գուչկօվին, Րօձեանկօյին, իսկ դրանց ինքնակամ միացան կոմս Դօրրէրը և Կրուպէնսկին, երևի վախենալով որ հոկտեմբերեանները կարող են խարդախութիւն անել։

Խոմեակովը շնորհակալութիւն յայտնեց Դումային՝ իրան ընտրելու համար և արտասանեց մի ճառ, անգոյն ճառ և դըրանով փակեց նիստը։

Օրէնքով նախագահը պիտի ներկայանայ Կայսրին, և ապա շարունակվեն Դումայի նիստերը։

Արսէն Քալանթար

ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(Սեփական Թղթակցից)

Էջմիածին, 9 նոյեմբերի

Վանքը դատարկվեց նորից. գնացին ամենքը եկւոր հիւրերից, հեռացան վերջին պատգամաւորները՝ կոյս Թայիրեան, բժ. Ս. Բարայեան, բժ. Մելիք-Բեգլարեան, Հ. Առաքելեան, Գ. Զուբար, տ. տ. Ադամեան, Հրաչեայ, և մենաստանի կեանքը դարձեալ մտաւ իր սովորական շրջանակի մէջ, ազգային անցեալ օրերի այդ լուռ վկան, անպաճոյճ կոթողը մատնվեց իր ճակատագրի անխուսափելի բաղդին. պատգամաւորների շարանը անցաւ մեր ազգային միակ խոշոր կրթական տաճարի՝ Գէորգեան ճեմարանի առջևից փակ աչքերով, առանց խղճահարութեան, առանց անկեղծ կարեկցութեան։

Եկան կաթողիկոսին թաղելու. այդ էր նրանց ստացած միակ լիազօրութիւնը և ուրիշ ոչինչ։

Իսկ երբ հարկ լինի օգտվել այդ հաստատութիւններից որևէ նպատակի կամ դիտումի համար, օգուտ քաղել նրանցից կամ, ինչպէս մօդա է ասել, շահագործել նրանց, նորից հանդէս կը գայ այդ ճառող պատգամաւորների խմբակը ժողովրդի անունից, ժողովրդական շահերի պաշտպանութեան համար, նոր հրահանգներով, հրամայողական առանձնայատուկ շեշտով ու պահանջներով խռովելու աշխարհիկ կեանքից անջրպետված այդ քայքայվող մենաստանի սևազգեստ բնակիչների լճացած միջավայրը։ Ջերմ հետաքրքրութիւն շահագրգռված խնդիրներում։ Դա է մեզ ղեկավարող սկզբունքը։

Դրսեցիները գնացին, թող ուրեմն մնացողները՝ ներսեցիները հոգան իրանց մասին, աշխատեն կանգուն պահել այն հաստատութիւնները, որոնք յանձնված են իրանց խնամատարութեան և որոնց բարւոք վիճակի մասին պատասխանատու են ամբողջ հայութեան առաջ։

Հեռացողների հետ միասին կարծես ամայացաւ, կենդանութիւնից զրկվեց ոչ միայն վանքը, այլ և Վաղարշապատը. կեանքը այլ ևս չէ եռում հրապարակի վրա. ամբոխի շարանը այլ ևս մրջիւնի ժրաջանութեամբ չէ շտապում դէպի վանքը. կառապանների դէմքից փախել է ուրախ ժպիտը, և նրանք, արբեցութիւնից նոր ուշաբերված նման, մարդկանց փոխադրելու համար 10 րուբլի պահանջի փոխարէն այժմ բաւականանում են 5—6 րուբլով, իսկ երկու օրից յետոյ, երևի, 3—4-ով էլ կաղաչեն։ Այժմ նրանք ծուլօրէն են անցնում տղմով լճացած փողոցներով։ Անցան օրերը, երբ ամեն ինչ, բացի եղանակից, կարծես ձգնում էր շուք, հանդիսաւորութիւն տալ մեր վարդագոյն երազները երբեմնի բորբոքող թաղման հանդիսին։

Վերջին հրաժեշտը տալով նրա թարմ աճիւնին՝ գնացին, հեռացան ամենքը դէպի իրանց տները, իրանց կենսական առօրեայ հոգսերին։

*

Այս առաւօտ կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսին ներկայացաւ անգլիական եկեղեցու Գիբրալտարի եպիսկոպոսը։

Վերջինս 15 օր սրանից առաջ Կենտրբերիի արքեպիսկոպոսի յանձնարարական նամակով եկել էր Էջմիածին և այնտեղից էլ անցել դէպի Վան, որտեղ նրանք ունեն միսսիա և դպրոց։ Վանից Գիբրալտարի եպիսկոպոսը անցել է Քօչանիս և ներկայացել նեստորականների մարշիմօնին, որը 21 տարեկան մի երիտասարդ է։ Վերջինս դիմած է եղել անգլիական միսսիային, որպէսզի օգնեն իրան լուսաւորութիւն տարածելու տգիտութեան մէջ խարխափող ժողովրդի մէջ։ Այժմ այնտեղ կայ միայն մի դպրոց և մի քահանայ։ Գիբրալտարի եպիսկոպոսը իր հետ այդ դպրոցի համար տարել է մի ուսուցիչ և մի վարժուհի։ Նեստորականների մէջ կրօնական խտրութիւն այլ ևս չէ նկատվում։ Ընդունելութիւնը, եպիսկոպոսի ասելով, եղել է չափազանց սիրալիր։

*

Տեղապահ սրբազանին տուած այցելութեան ժամանակ ես անձամբ ներկայ էի։

Անգլիական եպիսկոպոսը Հայրիկի մահվան գոյժը ստացել է Վանում, որտեղ ժողովրդի ահագին բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ է կատարվել:

Տեղապահ արքեպիսկոպոսը մի քանի հարցեր տուեց տեղական հայ ժողովրդի վիճակի մասին, որոնց թարգմանում էին Կարապետ և Կոմիտաս վարդապետները:

Գիբրալտարի եպիսկոպոսը բացատրեց, որ հայերը անգրգռելի են իրանց հաւատի մէջ և զարմանալի տոկունութիւն ու համբերութիւն են ցոյց տալիս: Այնուհետև վերջինս խնդրեց իր բերած նամակի պատասխանը տալ իրան: Այդ առիթով տեղապահը պատասխանեց, որ հանգուցեալ վեհափառը մտադիր էր պատասխանել այդ նամակին, բայց անսպասելի մահը վերջ տուեց նրա կեանքին: Եպիսկոպոսը յայտնեց, որ տեղապահը ինքը կարող է ուղղակի այդպէս էլ պատասխանել իր կողմից:

Վերջում Գիբրալտարի եպիսկոպոսը ցանկութիւն յայտնեց տեսնել տաճարը, թանգարանը և հնութիւնները:

Տեղապահը առաջարկեց բացատրել եպիսկոպոսին, որ իրանց մօտ շատ աւելի գեղեցիկ եկեղեցիներ կան, թող որ մեր տաճարի վրա նա նայի միայն իբրև հնութիւն, ըստ այնմ էլ գնահատի:

Դրանից յետոյ իրար հետ համբուրվելով հրաժեշտ տուին:

Սինոդին Պօլսից հեռագրում է Օրմանեան պատրիարքը, որ այնտեղ մեծ բազմութեան առաջ հոգեհանգիստ է կատարվել Հայրիկի մահվան առիթով:

Լ. Գ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Ախալքալաք, 7 նոյեմբերի

Տեղիս հայոց եկեղեցում, ամսիս 4-ին և 6-ին, ս. պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ վեհափառ Հայրիկի համար: Հոգեհանգստին ներկայ էր և մեր հարևան հասկացող դասը: Թաղման օրը տեղական դպրոցը և խանութները փակ էին:

Յ. ք. Մ.

—

Շուշի, 6 նոյեմբերի

Վեհափառ Հայրիկի մահը կայծակի արագութեամբ տարածվեց Շուշում: Նրա յիշատակը յարգելու համար ժողովուրդը փակեց խանութները և հոկտեմբերի 30-ի երեկոյեան դիմեց եկեղեցի, ուր հոգևորականութիւնը, առաջնորդի գլխաւորութեամբ, հոգեհանգիստ կատարեց: Այսօր Թուրքերը, ի նշան յարգանաց, փակել էին իրանց խանութները:

Առանձին յայտարարութեամբ, այսօր, նոյեմբերի 6-ին, թաղման օրը Ղազանչեցոց եկեղեցում հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ տեղի ունեցաւ: Եկեղեցին և բակը լիքն էին խուռն բազմութեամբ: Ներկայ էր ամբողջ հայ հոգևորականութիւնը՝ գլուխ ունենալով Աշոտ եպիսկոպոսին, ռուս հոգևորականութիւնը, Թուրք ղազին, մոլլան, Թուրքերի բազմաթիւ ներկայացուցիչներ, ռուս պաշտօնեաներ, բոլոր դպրոցների սաներն ու սանուհիներն իրանց ուսուցիչներով, համքարութիւնն իր դրօշակներով:

Եկեղեցում երգում էր թեմական դպրոցի քառաձայն խումբը՝ ուսուցիչ Ռուբէն Մանասեանի ղեկավարութեամբ: Պատարագիչն էր Աշոտ եպիսկոպոսը: Պատարագը վերջանալուց յետոյ՝ սրբազանը քարոզ խօսեց, բնորոշելով կաթողիկոսի ժողովրդականութիւնը, որով և իրաւամբ արժանացել էր «Հայրիկ» մեծանուն անուան. ապա շեշտեց Խրիմեանի մատուցած ծառայութիւնները Թիւրքահայաստանում և վերջացնելով իր խօսքը՝ մաղթեց, որ հանգուցեալը ունենայ մի արժանաւոր յաջորդ:

Այնուհետև հոգեհանգստեան կարգն սկսվեց, որից յետոյ Թուրք մոլլան մելամաղձոտ ձայնով մի մեղեդի երգեց ղուրանից: Մոլլայի ձայնը այնքան ազդու էր և այնքան տխուր շեշտեր էր պարունակում իր մէջ, որ շատերի աչքերից արցունքներ հոսեցրեց: Կարճ խօսեց ղազին եւ, որով յայտնեց, որ հանգուցեալ Հայրիկը թէ հայերի և թէ Թուրքերի համար սիրելի անձնաւորութիւն էր:

Լ. Յովսէփեանց

—

Ցարիցին, 6 նոյեմբերի

Վեհափառ կաթողիկոսի թաղման օրը, ամսիս 6-ին, տեղիս նորակառոյց ս. Գրիգոր եկեղեցում պատարագից յետոյ Մկրտիչ քահ. Գասպարեանը հոգեհանգիստ կատարեց խուռն երկսեռ բազմութեան ներկայութեամբ: Հանդիսականների շարքում աչքի էին ընկնում քաղաքիս ականաւոր օտարազգիները: Քահանան օրվայ առիթով խօսած իր ճառում թւեց վեհափառի արժանաւորութիւնները: Նոյն օրը քաղաքիս հայերի խանութները փակ մնացին:

Յ. Դաւթեան

—

Քառիշ գիւղ, 8 նոյեմբերի

Տեղիս հայ խանութպանները կաթողիկոսի մահվան առիթով, նոյեմբերի 6-ին, հոգեհանգիստ կատարել տուին տեղիս վրացիների եկեղեցում, որովհետև գիւղիս բնակիչները վրացի են և հայոց եկեղեցի չը կայ: Հոգեհանգստի կարգը կատարեցին վրացի քահանաները: Հայերիս խանութները փակ էին այդ օրը:

Վ. Ս.

—

Վերին-Աղդան, 6 նոյեմբերի

Երէկ, ամսիս 5-ին, Վ.-Աղդան գիւղի (Ղազախի գաւառ) ծխ. դպրոցի ուսուցիչը, համաձայն խառն ժողովի որոշման, դադարեցրել էր դպրոցում պարապմունքները՝ վեհափառ կաթողիկոսի յիշատակը յարգելու նպատակով:

Խառն ժողովի որոշման համաձայն՝ այսօր, կաթողիկոսի թաղման օրը, պատարագ մատուցեց ծխատէր Մեսրոպ քահանան: Առաւօտեան ժամը 10-ին դպրոցի աշակերտները հաւաքվեցին դպրոց, որտեղ համաձայն որոշման եկան և հոգաբարձուները: Ապա հոգաբարձուները, աշակերտների և ուսուցչի հետ միասին, ուղևորվեցին ներքին թաղի Ամենափրկիչ եկեղեցին:

Աշակերտները տանում էին կաթողիկոսի պատկերը առջևից:

Եկեղեցում աշակերտները, ուսուցիչը և հոգաբարձուները ներկայ գտնվեցին պատարագի ընթացքում: Ներկայ էր և գիւղական հասարակութիւնը:

Պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց:

Բու-Դուր

—

Լաչօղլի, 10 նոյեմբերի

Ամսիս 6-ին, կաթողիկոսի թաղման պատճառով, տեղիս հայոց եկեղեցում կատարվեց հանդիսաւոր պատարագ՝ մասնակցութեամբ բաւականաչափ հայերի: Պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ: Պատարագիչ Բագրատ քահ. Սուքիասեանը ճառ խօսեց, ծանօթացնելով ժողովրդին Խրիմեանի կեանքի հետ: Հայոց դպրոցը, ի յիշատակ կաթողիկոսի, երեք օր արձակեց իր աշակերտներին: Հայ վաճառականները պատել էին հանգուցեալի յիշատակը՝ թաղման օրը փակելով իրանց խանութները:

N. N.

—

Կիսլավօդսկ, 5 նոյեմբերի

Այսօր Կիսլավօդսկից ուղարկվեց էջմիածին հետեւեալ հեռագիրը. «Էջմիածին, Մինաս Բերբերեանին, պատճէնը սինոդին: Կիսլավօդսկի հայերի կողմից խնդրում ենք ձեզ լինել արտայայտիչ մեր որդիական տխուր զգացումների ամենասիրելի Հայրիկի մահվան առիթով: Երկիւղած աղօթքներով խոնարհվում ենք քո սուրբ նշխարի առաջ, ժողովրդից սիրված, բազմաչարչար ծերունի: Տէր-Յովհաննիսեան, Բէշտաու, Օչակով, Խօջայեվ, Օսիպով, Օչակով, Գալստեան, Թամբիեվ, Եմելեան»:

Մտադրութիւն կայ տեղիս հայերի մէջ մի գումար հաւաքել և գործադրել Հայրիկի յիշատակին:

Տ.-Յ.

—

Ղուրդուղուլի գիւղ (էջմ. գ.), 6 նոյեմ.

Այսօր փակվեցին տեղիս բոլոր խանութներն ու մեքենաները և տեղիս մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Խրիմեան Հայրիկի մահվան առիթով: Հոգեհանգստին ներկայ էին տեղիս պրիստաւն իր պաշտօնեաներով, ուսուցիչն իր աշակերտներով և ժողովրդի խուռն բազմութիւն: Հոգեհանգըստից յետոյ Յովսէփ քահանան հանգուցեալի կեանքի նշանաւոր դէպքերը պատկերացրեց ժողովրդի առաջ:

Հասարակութեան կողմից որպէս պատգամաւոր էջմիածին ուղարկվեցին Գարեգին քահանան և Յ. Աղախանեանը, կաթողիկոսի թաղմանը ներկայ լինելու համար:

Ս. Մուրադեան

—

Շամախի, 8 նոյեմբերի

Այսօր տեղիս ս. Աստուածածին եկեղեցում պատարագից յետոյ հանգուցեալ կաթողիկոսի համար կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ, որին ներկայ էր երկսեռ խուռն բազմութիւն, չը նայած եղանակի վատութեան:

Հոգեհանգստի ժամանակ ժողովրդի շարքում աչքի էին ընկնում և բազմաթիւ օտարազգիներ: Պատարագի սկզբից մինչև վերջը ներկայ էին գաւառապետը, ռէալական դըպրոցի դիրեկտորը, ուսուցիչներ և ուրիշ պաշտօնեաներ: Ներկայ էին ծխ. դպրոցի աշակերտ-աշակերտուհիները, պրօգիմնազիայի աշակերտուհիները և վարժուհիները և մօլօկանների ներկայացուցիչները: Քարոզ խօսեց տեղիս քահանան շեշտելով հայերիս մեծ կորուստը և բնորոշելով Խրիմեանի կատարած դերն իր ժամանակում:

Պատարագը վերջացաւ ժամը 1-ին:

Ժողովրդի հետաքրքրութեան առարկան ներկայումս այն հարցն է, թէ ո՞վ է լինելու արդեօք կաթողիկոսական թեկնածուն:

—

Նոր-Բայազէտ, 8 նոյեմբերի

Ամսիս 6-ին, կաթողիկոսի թաղման օրը, Նոր-Բայազէտի հասարակութիւնը հոգեհանգիստ կատարեց մեծ ծերունու յիշատակին: Պատարագին երգում էր քառաձայն խումբը Վ. Ափրիկեանի ղեկավարութեամբ: Պատարագից յետ կատարվեց հոգեհանգիստ, ապա խօսեց ուսուցիչ Վ. Ափրիկեանը և բացատրեց հանգուցեալի գործունէութիւնը սկսած 1840 թւականից:

Եկեղեցին լիքն էր երկսեռ խուռն բազմութեամբ:

—

Ջալալ-Օղլի, 7 նոյեմբերի

Հոկտեմբերի 31-ի առաւօտեան ժամը 10-ին Թիֆլիսից խփված մի հեռագիր գուժեց ամենայն հայոց կաթողիկոսի մահը: Իսկոյն փակվեցին տեղիս բոլոր մագազինները և արհեստանոցները, դադարեց ուսումը դըպրոցում. ամբողջ Ջալալ-Օղլին մի րոպէում սգի մէջ ընկաւ. եկեղեցու զանգակները սկսեցին տխուր ղօղանջել:

Կատարվեց հոգեհանգիստ, որին ներկայ էին խուռն բազմութիւն և տեղիս ուսումնարանի երկսեռ աշակերտութիւնը՝ ուսուցչական կազմի հետ միասին: Թաղման օրը աւանը նոյնպէս սգի մէջ էր: Կատարվեց հոգեհանգիստ: Պատարագից յետոյ Արիստակէս քահ. Աբովեանը խօսեց հանգուցեալի գործունէութեան մասին: Ապա խօսեցին և երկու ուսուցիչներ: Եկեղեցին լիքն էր խուռն բազմութեամբ:

Զուարթ

—

Նուխի, 7 նոյեմբերի

Հոկտեմբերի 30-ին, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, Նուխում տարածվեց վեհափառ հայրապետի մահվան լուրը: Հետեւեալ օրը քաղաքիս բոլոր խանութները փակվեցին և թէ հայոց ու թէ ռուսաց դըպրոցներում պարապմունքները դադարեցին, ահագին բազմութիւնը խռնվեց եկեղեցու բակում, ուսուցչական խումբը աշակերտ-աշակերտուհիներով եկաւ եկեղեցի, և հոգեհանգիստ կատարվեց:

Գաւառապետը բացակայ լինելով՝ քաղաքագլուխը իր պաշտօնեաներով, սիւննի և շիա հոգևորականութիւնը մահմեդական ինտելիգենցիայով և քաղաքի հայ ներկայացուցիչները դիմեցին տեղիս փոխանորդ Եղիշէ վարդապետի մօտ՝ յայտնելու իրանց ցաւակցութիւնները: Երկու եկեղեցիներում ևս ամեն օր կատարվում էր հոգեհանգիստ:

Թաղման օրը, նոյեմբերի 6-ին, պատարագի ժամանակ եկեղեցում երգում էր դըպրոցների քառաձայն խումբը՝ ուսուցիչների մասնակցութեամբ: Նուխու եկեղեցիներում ահագին բազմութեան ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ, որտեղ փոխանորդը խօսեց Հայրիկի հասարակական գործունէութեան մասին: Նոյնպէս խօսեցին Ե. Յովսէփեանը և հոգեհանգստին մասնակցող քահանաներից մէկը:

Ռիւքար

—

Առաջաձոր, 6 նոյեմբերի

Ամսիս 4-ին, կիրակի, Գանձասարի գործակալ Ղևոնդ քահ. Յովսէփեանցի և Վանք գիւղի ծխատէր Մեսրոպ քահ. Տէր-Գրիգորեանցի նախագահութեամբ Գանձասարի վանքում հանգուցեալ Հայրիկի մահվան առիթով մատուցվեց պատարագ և հոգեհանգիստ: Պատարագին երգում էր վանքից ոչ հեռու գտնվող Առաջաձորի ուսումնարանի աշակերտական խումբը: Ներկայ էին Խաչէն ձորակի գիւղօրայքից հաւաքված երկսեռ բնակիչներն իրանց քահանաներով: Պատարագից և հոգեհանգստից յետոյ Ղևոնդ քահանան քարոզ խօսեց և համառօտ կերպով պատմեց հանդիսականներին Հայրիկի կենսագրութիւնը և գործունէութիւնը: Թէ երգեցիկ խումբը և թէ տէր Ղևոնդի քարոզը լաւ տպաւորութիւն թողեցին հանդիսականների վրա:

Բ. Զաքարեանց

—

Դերբէնտ, 7 նոյեմբերի

Վեհափառ Հայրիկի մահը Կովկասից դուրս գտնված հայաբնակ քաղաքներում ևս մեծ յուզում առաջ բերաւ հայերի մէջ:

Մեզանում էլ կատարվեցին հոգեհանգիստներ. կիրակի՝ ամսիս 4-ին և թաղման օրը՝ 6-ին հայ, Թուրք, հրէայ և ռուս ժողովրդի խուռն բազմութեան ներկայութեամբ շքեղ հոգեհանգիստ կատարվեց:

Առաջին օրը պատարագիչ Վարդանեան քահանան խօսեց Հայրիկի մի շարք բարեմասնութիւնների մասին: Ապա ուսուցիչ Տէր-Գրիգորեանը մի ողբ կարդաց:

Թաղման օրը հայերից, Թուրքերից և հրէաներից ճառ կարդացողներ և արտասանողներ եղան: Ճառախօսներից ուսուցիչ Ս. նկարագրեց Հայրիկի կեանքը մինչև կաթողիկոսութիւն և կաթողիկոսութեան օրով:

Սագանդարեան

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Երկրորդ արտակարգ նիստը կայացաւ կիրակի, նոյեմբերի 11-ին, ցերեկով Յանձնաժողովի փոխ-նախագահ բժ. Ստեփանեանի նախագահութեամբ և ներկայութեամբ անդամների պ. պ. Հ. Առաքելեան, Ա. Արասխանեան, բժ. Վ. Արծրունի, Ա. Մելիք-Ազարեան, Աւ. Սահակեան և Ա. Քալանթար: Հրաւիրված էին նաև պ. պ. Ս. Յարութիւնեան և Յ. Խունունց:

Յանձնաժողովը լսեց անդամ-գանձապահ պ. Ա. Մելիք-Ազարեանի զեկուցումը այն մասին, որ «Նադէժդա» ընկերութիւնը պահանջում է վճարել Հին-Նախիջեւան ուղարկված 10 վագօն ցորենի ճանապարհածախսը և երկաթուղային վարչութեան որոշած տուգանքը, ընդամենը 2800 ր.:

Գ. Առաքելեան յայտնեց, որ, յիշեալ 10 վագօն ցորենը ուղարկելու ժամանակ, Բագուի նպաստամատոյց մասնաժողովի գործակալը փոխանակ մէկ վագօնի մէջ ածելու սովորաբար պահանջվող 750 պուդ ցորեն, վագօնում լցնել է տուել մօտ 1500 պուդ: Երբ վագօնները հասնում են Ուլուխանլու կայարանը, երկաթուղային վարչութիւնը տեղեկանում է այդ և տուգանք է նշանակում: Նախիջեանի մասնաժողովը հրաժարվում է տալ տուգանքը, իսկ վագօնները երկար ժամանակ կանգնած մնում են, այնպէս որ տուգանքի վրա աւելանում է 800 րուբլի «за храненіе»: Վերջապէս «Նադէժդա» ընկերութիւնը տալիս է թէ տուգանքը և թէ «за храненіе», և ահա այդ գումարներն (2800 ր.) են որ Թիֆլիսի բաժանմունքը պահանջում է:

Անդամները գտան, որ Յանձնաժողովը բնաւ չէ կարող վճարել այդ փողը, քանի որ նրա միջոցով չէ կատարվել այդ տուգանքների գործը, բայց և մանրամասնութիւնները իմանալու և տեղական գրասենեակի հետ վերջնական համաձայնութեան գալու համար գործը յանձնարարվեց Յանձնաժողովի անդամ պ. Արասխանեանին:

Ապա անդամ-քարտուղար պ. Հ. Առաքելեան զեկուցեց, որ համարեա ամեն օր զանազան գաւառներից բազմաթիւ խնդրագրեր են ստացվում, որով խնդրատուները, նկարագրելով իրանց ծայրայեղ թշուառ կացութիւնը և միջոցների կատարեալ բացակայութիւնը, աղերսագին խնդրում են շուտափոյթ կերպով օգնութեան հասնել իրանց, քանի ուշ չէ, քանի սովամահութիւնից մեռնելու եղակի դէպքերը չեն բազմապատկվել, քանի որ հնար կայ հայ տանջված շինականին կորստեան անդունդից յետ քաշել...

Թիֆլիսի կենտ. Նպաստ. Յանձնաժողովը քննելով իր միջոցները, տեսաւ, որ նրանք ներկայումս շատ սուղ են, և հակառակ իր ջերմ և լիակատար ցանկութեան նա անկարող է բաւարարութիւն տալ բոլոր խնդրատուներին: Ուստի և անհրաժեշտօրէն հանդէս է գալիս կառավարութեանը դիմում անելու և կարօտ տեղերի համար փոխարինաբար նպաստ խնդրելու հարցը:

Կարիքը համարեա թէ համատարած է: Սովի ուրուականը մի քանի տեղերում սպառնում է հացի համար իր սիրասուն լծկան անասուններն իսկ ծախած գիւղացուն: Պէտք է արագ և շատ օգնութեան դիմել: Եւ կառավարութեան օգնութիւնը միայն կարող է եթէ ոչ արմատապէս, գոնէ որոշ ժամանակով ամոքել տնտեսական լիակատար քայքայման և յուսահատութեան դուռը հասած գիւղացուն...

Այդպիսի դիմում անելու մասին Կենտրոնական Յանձնաժողովը մտածեց դեռ գարնանը: Պ. պ. Ա. Քալանթար, բժ. Ստեփանեան և Ս. Զաւարեան բանակցութեան մէջ մտան շէյխ-ուլ-իսլամի և տեղացի ականաւոր Թուրքերի հետ՝ միասին դիմելու կառավարութեան և նպաստ խնդրելու վնասված տեղերի համար: Սակայն այն ժամանակ Թուրքերը մերժեցին՝ պատճառաբանելով երկու ազգերի յարաբերութիւնների լարված դրութիւնը և ուրեմն խնդրելու անպատեհութիւնը:

Այժմ կարիքը ընդունել է աւելի մեծ, ընդարձակ չափեր, հայ-Թուրքական անմիտ ընդհարումների հետևանքի վրա աւելացել են բնութեան արհաւիրքները, և միանգամայն տեղին և ժամանակին է կառավարութիւնից օգնութիւն խնդրելը...

Ա. Քալանթար և Ս. Յարութիւնեան յայտնեցին, որ բագուեցիք նոյն իմաստով արդէն որոշում կայացրել են: Նրանք դիմել են գաւառները և խնդրել են ուղարկել պատգամաւորներ, որոնք գալու են Թիֆլիս նոյեմբերի 20-ին:

Ա. Քալանթար տուեց տեղեկութիւններ վնասված գաւառների մասին և ներկայացրեց այն հարցերի ցուցակը, որոնց վերաբերութեամբ պէտք է ունենալ նիւթեր:

Յանձնաժողովի անդամները երկար կանգ առան առաջարկված խնդրի վրա և բազմակողմանի կերպով քննելուց և լուսաբանելուց յետոյ յանգեցին հետևեալ որոշումներին. 1) կազմել վնասված տեղերից ընդհանուր պատգամաւորութիւն, ցանկալի համարելով և Թուրքերի մասնակցութիւնը, իսկ եթէ Թուրքերը հրաժարվեն, այդ դէպքում հայերը պէտք է դիմեն անկախ և ինքնուրոյն կերպով:

2) Դիմումը անել նոյեմբերի 25-ին:

3) Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը հանդիսանում է իբրև կենտրոնական մարմին պատգամաւորների գործունէութեան վերաբերութեամբ:

4) Պատգամաւորներ հրաւիրելու համար գրել հետևեալ գաւառները. Ղազախ, Ջիվանշիր, Շուշի, Զանգեզուր, Լոռի, Դարալագեազ, Կարս, Արարատ, Նոր - Բայազէտ, Ախալքալաքի մի մասին:

5) Պատգամաւորներին գրել, որ, նախքան Թիֆլիս գալը, նրանք դիմեն տեղական գաւառապետներին և նահանգապետներին. իւրաքանչիւրը նրանցից պէտք է իր հետ բերէ փաստացի տեղեկութիւններ հետևեալ կէտերի մասին. ա) վնասված տեղերի ցուցակը, բ) տների և շնչերի թիւը, գ) բերքի որակը—կարկուտ, երաշտ, դ) կարիքի չափը—քանի ամսվայ կարիք կայ, ե) հացի գինը, զ) սերմացուի կարիքը, է) հաց փոխադրելու միջոցները, փոխադրելու ծախքերը, ը) օգնելու եղանակի մասին. կարիքներ փողով, հասարակ աշխատանքով և այլն:

6) Իւրաքանչիւր գաւառից հրաւիրել 2—3 պատգամաւոր:

Շուշու ճանապարհի մասնաժողովին օգնելու հարցը, ուշ լինելու պատճառով, յետաձգվեց հետևեալ անգամին:

Ս. Եսայեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Մենք խոստացանք խօսել Վեդեկինդի «Գարնան բողբոջներ» պիէսի մասին:

Դա ժամանակակից ռեպերտուարի այն պիէսներից մէկն է, որ յարուցել է բազմատեսակ վիճաբանութիւններ և ենթարկվել թէր ու դէմ կարծիքների:

«Գարնան բողբոջների» առարկան պատանեկութիւնն է այն շրջանում, երբ զարթնում է սեռական զգացմունքը:

Առհասարակ հեղինակները խուսափում են այդ շրջանի մասին խօսելուց: Առօրեայ տնային և հասարակական կենցաղավարութեան ժամանակ ամեն կերպ աշխատում են առանձին գաղտնիքի և խորհրդաւորութեան տակ պահել ամուսնութեան և ծննդաբերութեան վերաբերեալ խնդիրները:

Վեդեկինդը ներկայացնում է մի շարք պատկերներ պատանեկական աշխարհից և ցոյց տալիս, թէ ինչպէս խորտակվում է երիտասարդ կեանքը նոր արթնացող սեռական զգացմունքի սխալներից:

Հանդիսականի առաջ անցնում են թարմ, պատանեկական հասակի մի շարք ներկայացուցիչներ՝ աշակերտներ, օրիորդներ, որոնք հազիւ նիւթ են ապա քաղաքացիներ դառնալու համար: Դրանց հետ զուգընթաց դուրս են բերված մանկավարժներ և ծնողներ, որոնք չեն կարողանում թափանցել մատաղ սերնդի հոգիների մէջ և նշմարել այնտեղ կատարվող յոյզերը և փոթորիկները:

Վեդեկինդի պիէսը այնքանով, որքան նա տալիս է հարազատ պատկերներ, հետաքրքրական է և ուշագրաւ. բայց երբ նա ձգտում է եզրակացութիւններ անել և որոշ հայեացքներ առաջ տանել, ցոյց է տալիս թուլութիւն և մտքի բռնազատութիւն:

Վեդեկինդի պատանի հերոսները դժբաղդութեան թեկնածուներ են: Նրանցից մի քանիսը անգէտ լինելով սեռական կեանքի էութեան և նրա փչերի մասին, զոհ են դառնում իրանց անգիտութեանը, բայց պիէսի մէջ կորուստի են մատնվում նաև նրանք, որոնք տեղեակ են աշխարհի չար ու բարիից:

Ամուսնութեան, սեռերի յարաբերութեան և ծննդաբերութեան վերաբերեալ խնդիրների գաղտնի պահելը պատանեկութիւնից—դարերի և աւանդութեան մի ժառանգութիւն է: Վերացնել գաղտնիքը առանց վնաս բերելու և նախազգուշական հրահանգներ տալ պատանեկութեանը—ահա դժուար լուծելու մի հարց, որ դնում է Վեդեկինդը և չէ վճռում ինքը: Նա միայն ակնարկներ է անում, որոնք աւելի մթնացնում են յարուցված հարցը:

Տիկին Եավօրսկայա մատաղահաս օրիորդ Վենդլայի դերում մի պարզամիտ, սիրուն աղջիկ էր, մի գեղեցիկ մանուկ, որ չը գիտէ թէ ինչ է աշխարհը: Վենդլայի մէջ յանկարծ արթնանում է սիրելու, փաղաքշելու զգացմունքը, և նա զոհ է գնում իր տգէտ անմեղութեան: Եավօրսկայան ներկայացրեց այդ ելևէջները նուրբ կերպով: Բնորոշ էին տիկին Ստրօգովա նրա մօր դերում, Շորշտէյն Մօրիցի և Ֆեօդորով Մելխիօրի դերերում: Անսամբլը առհասարակ շատ բաւարար էր:

II

Կիրակի օր, նոյեմբ. 11-ին, Ռուսաց խումբը խաղաց Անրի Բերնշտէյնի «Գող» (Le voleur) պիէսը 3 գործողութեամբ:

Դերասանների համար այդ պիէսի մէջ կան բաւական խոշոր և տպաւորիչ դերեր:

Եավօրսկայա, որ խաղում էր Լուիզայի դերը, ցոյց տուեց իր դերասանական տաղանդի ոյժը, պատկերացնելով հոգեկան տանջանքների և ուրախութիւնների մի բարդ աշխարհ: Եավօրսկայա իբրև սիրող կին արտայայտում էր այնպիսի գգուանք, զգացմունքի այնպիսի ջերմութիւն, փոխադարձութեան այնպիսի կարօտ, որոնց ընդունակ է միայն անձնուէր սէրը:

Մեծ հաճոյք պատճառեց դերասան Շորշտէյն Րիշարի դերում իր գեղեցիկ և մտածված խաղով, նուրբ արտայայտված հոգեբանական վերլուծութեամբ:

«Գող» պիէսը կատարվում է գեղեցիկ անսամբլով:

Սիրող

III

Բաթում, 9 նոյեմբերի

Երէկ երեկոյեան, ամսիս 8-ին, Երկաթէ թատրոնում դերասան Ն. Յովհաննիսեանը խաղաց «Քին» դրաման տեղիս սիրողների մասնակցութեամբ:

Թատրոնը լիքն էր հանդիսականներով, միայն պակասում էին ջօջերը: Պէտք է ասել, որ Յովհաննիսեանը, շնորհիւ իր առաջին խաղի, շատ շուտ վայելեց մեր հասարակութեան ժողովրդականութիւնը:

Պ. Յովհաննիսեանը «Քինի» դերը լաւ կատարեց:

Սիրողներն այս անգամ աւելի ուժեղ էին, լաւ էին սովորել դերերը. նրանց մէջ աչքի էին ընկնում պ. Լաքա՝ Սօլօմոնի դերում և օր. Թ. Գիւրջեան՝ կոմսուհու դերում:

Ինչպէս լսում ենք, Յովհաննիսեանը մի շարք ներկայացումներ է տալու Բաթումում, բայց նա աւելի լաւ կանէր, եթէ կլասիկ պիէսներից,—ինչպիսին է՝ «Ոճրագործի ընտանիքը» կամ «Քինը» և այլն, որոնք մեր՝ թատրոն յաճախող ժողովրդի 90°/₀-ի համար անմատչելի են,—ձեռք վերցնէր և չը խաղար մէկը միւսի հետևից:

Լաւ կը լինէր, եթէ թերթև պիէսներ դնէր ներկայացնելու համար:

Վ. Մարտիրոսեան

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌԻ ԱՂԷՏԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Բագուից «Աղբիւր» գործարանի բանւորներից Լալայեանցի միջոցով 24 ր. 35 կ., Ասխաբադից Բօղդան Սարգսեանից—10 ր. և Ղարաքիլիսից Երուանդ Մամիկոնեանից—10 ր.:

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

I

Այսօր Խրիմեան Հայրիկի թաղման եօթներէքն է:

Եօթն օր առաջ մենք, հաւաքված Էջմիածնում, հողին և յաւիտենականութեան յանձնեցինք մի հոգևոր-ազգային գործչի, որի կեանքը այնքան լի էր յուզումներով, պատմական մեծ դէպքերով և որը, անշուշտ, լայն տեղ կը գրաւէ հայոց պատմութեան մէջ:

Այսօր նա այլևս պատկանում է պատմութեան, որի անաչառ գնահատութեան բովից անցնում են պատմական բոլոր գործիչները և պատմական բոլոր դէպքերը. հետևաբար նա՝ Խրիմեանն ևս ենթարկվելու է այդ անաչառ գնահատութեան:

Երբ առաջին անգամ հեռագիրը գուժեց Էջմիածնից Խրիմեանի մահը, մենք, խօսելով «Մշակի» մէջ նրա մասին և բերելով կենսագրական տեղեկութիւններ, այն ընդհանուր միտքն յայտնեցինք, որ Խրիմեանի գործունէութեան փառաւոր շրջանը վերջանում է մինչև նրա կաթողիկոս ընտրվելը, իսկ կաթողիկոսական շրջանը նրա ձեռք բերած փայլին և մեծ համբաւին ոչինչ նոր բան չաւելացրեց:

Ուրեմն, թէ մեր յօդուածով, թէ «Մշակի» մէջ Խրիմեանի մահվան առիթով երևցած բոլոր միւս յօդուածներով, ինչպէս և «Մշակի» նախորդ տարիների յօդուածներով մենք կամեցանք այն միտքն արծարծել, թէ, արդարև, Խրիմեանի գործունէութիւնը փառաւոր է եղել անցեալում, մինչև կաթողիկոս ընտրվելը, բայց կաթողիկոս ընտրվելուց յետոյ, դժբաղդաբար,. նա չարդարացրեց հայ ժողովրդի միահամուռ իղձը և ակնկալութիւնը, և այդ ևս ամբողջովին չէինք վերագրել իրան Խրիմեանին, այլ և իրանից անկախ պատճառների:

Նոյն միտքը մենք արտայայտեցինք Էջմիածնում մեր դամբանական ճառի մէջ, երբ մենք շեշտեցինք, որ խորին յարգանքի հարկ ենք վճարում հայ նշանաւոր հրապարակախօսին, մտքի, գրչի զինւորին, ստեղծագործողին, հայոց հարցի համար աշխատողին, ազգային մեծ գործչին: Խոնարհվել Խրիմեանի առաջ իբրև հայոց եկեղեցու մեծ հայրապետի, օրինակ իբրև Սահակի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Աշտարակեցու առաջ, մենք չենք կարող, եթէ չենք կամենում մեղանչել պատմական ճշմարտութեան դէմ: Եւ դա ամենևին չէ նսեմացնում Խրիմեանի անցեալ փառաւոր գործունէութիւնը, այլ ապացուցանում է միայն այն, որ Խրիմեանը մեծ ազգային և հոգևորական գործիչ է, բայց ոչ մեծ կաթողիկոս:

Թէ արդարև մեր արտայայտած միտքը մի արտառոց և անճիշտ նորութիւն չէր կամ անհեթեթութիւն, այլ մի ճշմարտութիւն, որ նոյն իսկ մեր յօդուածից դժգոհ մի քանի պատգամաւորներ խոստովանեցին, երբ անձամբ վերահասու եղան Էջմիածնի ողբալի դրութեան, այդ կը խոստովանեն շատերը, ինչպէս և այդ ճշմարտութիւնը արտայայտեցին ուրիշ շատերը:

Սակայն մեր հակառակորդները, կուսակցական միտումներով, կամեցան այդ պարզ ճշմարտութիւնը զէնք դարձնել մեր և «Մշակի» դէմ և գրգռել միամիտ ժողովուրդը մեր դէմ:

Ցոյց տալու համար մեր հակառակորդների անբարեխղճութիւնը, ապացուցանելու համար, թէ մեր արտայայտած միտքը իրանք մեր հակառակորդները՝ դաշնակցական բանակից՝ կրկնել են և նոյնը արտայայտել, մենք կը բերենք մի քանի փաստեր: «Նոր-Ալիքի» մէջ տպված էր մի հեռագիր, Ժընևից, որով պ. Խ. Մալումեան, ողբալով Խրիմեանի մահը, գովաբանում է միայն նրա անցեալ գործունէութիւնը:

«Կովկասի Առաւօտ» թերթի № 38-ում տպված է հետևեալը.

«Թող թէ Խրիմեան իր կեանքի վերջին տարիներում կաթողիկոս էր. բայց չէ՞ որ նրա կեանքի այդ շրջանը չէ մեզ հետաքրքրողը, այլ նրա անցեալը. հասարակական շահի տեսակէտից մի որևէ գործիչի անցեալը չէ կարող նսեմանալ, եթէ անգամ այդ գործիչի ներկան լի է բացասական կողմերով»:

«Земля» ռուս շաբաթաթերթը (№ 2) խօսելով Խրիմեանի մասին, ուղղակի ասում է, որ նրա կեանքի վերջին շրջանի տրագիզմը կայանում է նրանում, որ դարձաւ կաթողիկոս և այդ կաթողիկոսական շրջանը նրա փառքի նսեմացման շրջան դարձաւ:

Միթէ մենք մեր յօդուածներով «Մշակի» մէջ ճիշտ նոյն միտքը չէինք յայտնել: Ապա ուրեմն ինչու այնքան յարձակումն մեր դէմ. ինչու մեղադրանք, որ մենք ասել ենք, թէ Խրիմեանի կաթողիկոսական շրջանը փառաբեր եղաւ և նսեմացրեց նրա գործունէութիւնը:

Մեր հակառակորդ դաշնակցականները այժմ կրկնում են այն, ինչ որ մենք առաջինը արտայայտեցինք: Ուրեմն զուր էին ձեր աղմուկները, գրգռումը և պրօվօկացիաները «Մշակի» դէմ:

II

«Նոր-Ալիքի» և «Կովկասի Առաւօտի» շուրջը համախմբված անուղղելի Դոն-Քիշոտները ճիշտ որ անուղղելի են. նրանք չեն վարանում իրանց կուսակցական ստոր միտումների համար դիմել նոյն իսկ և պղծաւոր սուտերի, լաւ իմանալով, սակայն, որ սուտի ոտքը շատ կարճ է լինում:

Իմ Էջմիածին մեկնելուց անմիջապէս յետոյ «Նոր-Ալիքի» մէջ մի նամակ է տպվում, ուր ստախօս նամակագիրը յայտնում է, թէ «Մշակի» մէջ հաղորդված լուրը, որ իբր Հ. Առաքելեանն ևս քաղաքային դումայի կողմիցն ընտրված պատգամաւորութեան անդամ է, սուտ է, և իբր թէ դուման այդպիսի որոշումն չէ կայացրել, հետևաբար Հ. Առաքելեան հանդիսանում է ինքնակոչ պատգամաւոր:

Չը բաւականանալով դրանով, «Կովկասի Առաւօտը» իր № 36-ի մէջ ոմն Պարոյրի բերանով նորից կրկնում է նոյն պղծաւոր սուտը, թէ Հ. Առաքելեանը ինքնակոչ ներկայացուցիչ է հանդիսանում:

Ի՞նչ ասել այն մարդկանց մասին, որոնք չը քաշվեցին նոյն իսկ կաթողիկոսի մահվան դէպքն իրանց ստոր վրէժխնդրութիւնների առիթ դարձնել, մանաւանդ Պարոյրները, որոնք ոչ մի տեղից պատգամաւոր ընտրված չը լինելով՝ թոյլ էին տալիս իրանց պատգամաւորների ժողովներին մասնակցել ներգործական կերպով:

Թէ ես եղել եմ և լիակատար իրաւունք եմ ունեցել մասնակցել կաթողիկոսի թաղման իբրև Թիֆլիսի դումայի պատգամաւոր, դրա ապացոյցը հետևեալ դօկումենտն է, որ միանգամայն կը ջախջախէ ստախօս Պարոյրների և Թոփչեանների կեղտոտ վարմունքը.

վկայական

Ներկայ վկայականը տրվում է Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Համբարձում Առաքելեանին առ այն, որ նա, յիշեալ դումայի 1907 թ. նոյեմբերի 1-ին կայացրած որոշման ճիշտ հիման վրա, անդամ էր այն պատգամաւորութեան, որ Թիֆլիս քաղաքն ուղարկեց Էջմիածին նորին սրբութիւն ամենայն հայոց պատրիարք կաթողիկոս Մկրտիչ I Խրիմեանի թաղման ներկայ լինելու, ի ստուգութիւն որի քաղաքային ուպրավան ստորագրութեամբ և կնիքով վաւերացնում է: 10 նոյեմբերի 1907 թ. № 3440: Քաղաքագլխի պաշտօնակատարի տեղ՝ Կօկչաէվ, քարտուղար՝ Չրէլաէվ:

Այս վկայականն այնքան պերճախօս է, որ այլ ևս հարկ չը կայ գրպարտիչ դրօշմով կնքել մեր Դոն-Քիշոտներին:

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

3 նոյեմբերի

Անցեալ անգամ հաղորդել էի, որ մօտ օրերս ծխականների ընդհանուր ժողով պիտի գումարվի, քննելու այն հարցը թէ Մոսկվայի հայկական գաղութը ո՞րպիսի մասնակցութիւն պիտի ունենայ վեհափառ կաթողիկոսի թաղման գործում: Համաձայն տեղական թերթերում արված յայտարարութեան, այդ ժողովը կայացաւ երէկ, ամսիս 2-ին, երեկոյեան ժամը 8-ին, Գասպարեան անկելանոցի դահլիճում:

Ուղիղ ժամը $8^1/_2$-ին ժողովը բացվեց, որի նախագահ ընտրվեց իրաւաբան Ստեփան Մամիկոնեան:

Նախագահը դարձաւ ժողովին և առաջարկեց խօսել այն հարցի մասին, որ նա առաջին անգամ արծարծել էր մի խումբ ծխականների մէջ, եկեղեցում: Ուրիշ խօսքով նա ասաց, որ ժողովը նպատակայարմար է գտնում մի մարդ ունենալ Մոսկվայի հայկական գաղութից, որ գնայ Էջմիածին՝ իր բարոյական յորդորներով և բարոյական համոզմունքով Էջմիածնի միաբանութեան վրա ազդելու, որ իրերի դրութիւնը նոյն վիճակում պահեն, մինչև որ նոր կաթողիկոս կընտրվի: Եւ այդ մարդը անպայման պէտք է աշխարհական լինի, Էջմիածնի և հայկական կեանքին մօտ ծանօթ, հեղինակաւոր անձն, որի խօսքն ու ազդեցութիւնը ցանկալի հետևանք ունենայ իրերի դրութեան համար:

Ժողովականներից մէկը, բժ. Սիմէօն Շահնազարեան, խօսք խնդրելով ասաց, որ նախ քան այդ համակրելի առաջարկին և քննութեան անցնելը, պէտք է պարզել այն դերը, որ Մոսկվայի հայկական գաղութը խաղալու է վեհափառ կաթողիկոսի թաղման գործում: Եւ, որովհետև Մոսկվայից ներկայացուցիչ ուղարկելը անյարմար է, քանի որ թաղումը նշանակված է ամսիս 6-ին, ուրեմն ներկայացուցիչը թաղմանը չի հասնի, նա առաջարկեց ժողովին հեռագրել Էջմիածնի մօտակայ քաղաքներից մէկը՝ մեր նշանաւոր հասարակական գործիչներից մէկին և խնդրել նրան, որ նա Մոսկվայի հայկական գաղութի ներկայացուցիչը լինի: Պ. Շահնազարեանին հակաճառեց պ. Կուսիկեան (Լազարեան ճեմ. ուսուցիչ), գտնելով որ ներկայացուցիչ ունենալը մի ձևականութիւն է, և միանգամայն աւելորդ: Բայց նրան առարկեցին, որ կեանքի մէջ կատարվող երևոյթների մեծ մասը ձևականութիւն է, և եթէ այդ բանին հետևելու լինենք, ոչինչ չը պէտք անել: Պ. Շահնազարեանի առաջարկին միացան պ. Թանգեան (տեսուչ Լազարեան ճեմարանի) և ուրիշները: Այդ հարցը բաւական ձգձգվելուց յետոյ, վճռվեց ներկայացուցիչ ունենալ Մոսկվայի գաղութի կողմից: Ներկայացուցչութեան թեկնածուներ առաջարկվեցին պ. պ. Լևոն Սարգսեան, Սամսոն Յարութիւնեան, Բօղդան Դօլուխանեան և Մինաս Բերբերեան: Ի նկատի ունենալով որ Լևոն Սարգսեան և Մինաս Բերբերեան կարող են հրաժարվել այդ պատուից, ժողովը միաձայն վճռեց միւս երկու թեկնածուներին՝ Սամսոն Յարութիւնեանին և Բօղդան Դօլուխանեանին հեռագրել և խնդրել Մոսկվայի հայկական գաղութի ներկայացուցիչ լինել վեհափառ կաթողիկոսի թաղմանը: Եթէ այդ երկու թեկնածուներից մէկն ու մէկը հրաժարվի, այն ժամանակ մէկ հոգի կը լինի ներկայացուցիչ, իսկ եթէ երկուսն էլ կընդունեն ժողովի առաջարկը, այն ժամանակ գաղութը 2 հոգի կունենայ ներկայացուցիչ:

Այս հարցի լուծումից յետոյ ժողովը վերստին դարձաւ պ. Մամիկոնեանի արծարծած համակրելի հարցին,—այսինքն գաղութի կողմից ունենալ մի ներկայացուցիչ Էջմիածնում, որի պարտականութիւնն է լինելու իր բարոյական զէնքերով կռւելու Էջմիածնի միաբանութեան դէմ և աշխատելու, որ իրերի դրութիւնը նոյնութեամբ պահեն մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Այդ բաւական բարդ և կարևոր հարցի լուծումը, պարզ է, որ թեթևակի կերպով վճռել չէ կարելի, ուրեմն հարկաւոր է մտածել, այն էլ լուրջ մտածել: Ժողովը, երկար ու բարակ վիճաբանելուց և թեր ու դէմ կարծիքներ լսելուց յետոյ, համակրութեամբ և սիրով ընդունեց պ. Մամիկոնեանի առաջարկութիւնը: Այնուհետև խօսք եղաւ այն մասին, թէ ո՞վ կարող է այդ պատասխանատու գործը իր վրա ստանձնել: Ժողովը, ի նկատի ունենալով պ. Մամիկոնեանի լուրջ պատրաստականութիւնը այդ գործում, նրա երկարամեայ կապերը Էջմիածնի հետ, նրա մօտ ծանօթութիւնը իրերի դրութեան հետ, միաձայն ընտրեց նրան ներկայացուցիչ Մոսկվայի գաղութի կողմից: Բայց, ի զարմանս ամենքի, նա հրաժարվեց. ժողովը քանիցս խնդրեց, բայց նա հրաժարվելով հրաժարվեց, առարկելով որ հնարաւորութիւն չունի այժմ բացակայելու Մոսկվայից: Նա մինչև իսկ աւելացրեց, որ ինքը, որ երկար տարիներ կապված է եղել վեհափառ կաթողիկոսի հետ, նա, որ յաճախ կատարել է վեհափառի յանձնարարութիւնները, և վերջապէս ինքը, որ «յաճախ Հայրիկին Տաթևի սարերում է փրնտռել» ու միշտ էլ սիրել նրան, այժմ հնարաւորութիւն չունի իր վերջին հրաժեշտը տալու վեհափառ կաթողիկոսի աճիւնին, նրա ոսկորներին: Այդ բացատրութիւնից յետոյ ժողովը ստիպված եղաւ ուրիշ թեկնածուներ առաջ քաշել: Թեկնածուներ առաջարկվեցին պրօֆ. Գր. Խալաթեան, Բարսեղ Գասպարեան (Լազարեան ճեմարանի նախկին տեսուչներ) և Կար. Կուսիկեան, որոնք բոլորն էլ հրաժարվեցին: Ժողովը, ի նկատի ունենալով, որ ուրիշ արժանաւոր թեկնածուներ չը կան այդ շատ կարևոր և պատասխանատու միսսիայի համար, բժ. Շահնազարեանի առաջարկութեամբ, ընտրեց 6 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որի մէջ մտան՝ 1) Ստ. Մամիկոնեան, 2) պրօֆ. Գր. Խալաթեան, 3) Բար. Գասպարեան, 4) Կար. Կուսիկեան, 5) բժ. Սիմ. Շահնազարեան և 6) Յովհ. Խրմաջեան (վաճառական) և որի պարտականութիւնն է լինելու քննելու ներկայացուցիչ ունենալու հարցը և ընտրելու մէկին այդ պաշտօնի համար:

Յանձնաժողովի նիստը նշանակվեց կիրակի, ամսիս 4-ին, պատարագից յետոյ, Գասպարեան անկելանոցի դահլիճում:

Մենք սրտանց ողջունելով գաղութի այդ քայլը, որի ինիցիատիվան պ. Մամիկոնեանին է պատկանում, ցանկանում ենք, որ տեղական հայ գործիչները հրապարակական ասպարէզում գործելու ժամանակ մէկը միւսին հետևելով չը հրաժարվի, այլ ընդհակառակը, ասպարէզ նետվելով՝ գործէ առանց վարանելու, աներկիւղ: Մենք, օրինակ, երէկվայ ժողովում ցոյց տուած մեր գործիչների վարմունքը դատապարտում ենք: Խօսելու ժամանակ նրանք հրապարակ գալիս են, իսկ երբ անհրաժեշտ է գործել՝ տեղի են տալիս ասպարէզից:

Մոռացայ ասել, որ ժողովի սկզբում հասարակութիւնը յոտնկայս յարգեց վեհափառ կաթողիկոսի յիշատակը:

Նախագահ Ստ. Մամիկոնեան, գիշերվայ $11^1/_2$ ժամին, ժողովը հրատարակեց փակված:

Ոսկու-Ջօն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի առևտրա-տնտեսական վերակացուները վերջին երկու օրում կազմել են 59 արձանագրութիւն այն հացավաճառների մասին, որոնք հացը ծախում են սովորական գներից աւելի գներով: Երէկվանից արդէն սկսեցին փորձի համար հաց թխել դումայի կողմից նշանակված մասնաժողովի հսկողութեան տակ:

◆ Կիրակի, նոյեմբերի 11-ին, Սիոնի տաճարում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Ալէքսանդր եպիսկոպոսի յիշատակին: Հոգեհանգստին ներկայ էին զինւորական իշխանութիւնները, հասարակական և մամուլի ներկայացուցիչները և բազմաթիւ ժողովուրդ: Օրվայ պատշաճ ճառ խօսեց Կոկէմալաձէ քահանան:

◆ Զուբալովի ժողովրդական տանը ամեն շաբաթ՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը կատարվում են հակախոլերային պատուաստումներ: Իւրաքանչիւր անգամ պատուաստում են 3—4 հոգու: Բժիշկների մասնաժողովի հսկողութեան համաձայն, այդ պատուաստումների հետևանքները միանգամայն բաւարարացուցիչ են:

◆ Սօլօլակի տոնէլի աշխատանքները այժմ ընթանում են բաւական արագ: Երկու կողմից մինչև օրս փորված է 37 քառ. սաժէն՝ մի սաժէն լայնութեամբ: Բայց լայնութիւնը հասցնելու են $5^1/_2$ սաժէնի, իսկ բարձրութիւնը՝ $3^1/_2$ սաժէնի:

◆ Կովկասեան կայսերական բժշկական ընկերութեան հերթական նիստը նշանակված է նոյեմբերի 16-ին:

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան փոխ-վերատեսուչ Ն. Մաքսիմովը նշանակվել է Աստրախանի փոխ-նահանգապետ:

◆ Տեղական բարձր իշխանութիւնը բանտից արձակել է «Тифлисскій Листокъ»-ի խմբագիր Ի. Գ. Խաչատուրովին:

◆ Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ պ. Կարակաշը յայտնել է «Կովկասագիտական կուրսերի» վարչութեանը, որ դեկտեմբերի սկզբին նա ժամանելու է Թիֆլիս և մտադիր է կարդալ 8 դասախօսութիւն (16 ժամ) գեօլօգիայից, լուսաբանելով երկրաբանական երևոյթները Կովկասի բնութիւնից վերցրած օրինակներով: Կուրսերի վարչութիւնը հեռագրով խնդրել է պ. Կարակաշին, որ նա պատրաստել տայ հարկաւոր պատկերները:

◆ Այսօր, երեկոյեան ժամը 6-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում (Ալէքսանդրեան այգի) կը կայանայ Գ. Մ. Սմիրնովի երկրորդ դասախօսութիւնը Կովկասի օգտակար հանքային ջրերի մասին: Վաղը նոյն դասընթացքներում կը կայանան երկու դասախօսութիւններ.— ցերեկվայ ժամը 12-ին, Ա. Ֆոմինի դասախօսութիւնը՝ բուսաբանութեան մասին, և երեկոյեան ժամը 6-ին, Իւ. Աբուլաձէի դասախօսութիւնը՝ վրաց լեզուի մասին:

◆ Կիրակի, նոյեմբերի 11-ին, Արաքսեան թատրոնում կայացաւ քիտաչիների ընդհանուր ժողովը, ուր ընտրվեց վարչութիւն, բաղկացած 9 անդամից և 9 փոխ-անդամից:

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է. ա) Թիֆլիսի առևտրական դպրոցի դասատու Իւ. Աբուլաձէին հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ, քաղաքական-տնտեսական և հասարակական-գրական օրաթերթ ռուսերէն լեզուով «Кавказовѣдѣніе» անունով, համանուն շաբաթաթերթ և ամսաթերթ՝ յաւելուածներով, բ) Սղնախի բնակիչ Ի. Ալխանաշվիլուն՝ հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ, գրական և քաղաքական օրաթերթ վրացերէն լեզուով «Ցիսկարի» (Արշալոյս) անունով, գ) Թիֆլիսեցի Գ. Օքլիձէին՝ հրատարակել Թիֆլիսում, իր խմբագրութեամբ, քաղաքական և գրական օրագիր վրացերէն լեզուով «Ցիսարտկէլա» (Ծիածան) անունով:

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ երէկ փակեցին Թիֆլիսում հրատարակվող «Կովկասի Առաւօտ» թերթը, վնասակար ուղղութեան համար:

◆ Թեհրանի ռուսաց դեսպան Գարտվիգից Բագուի քաղաքապետը ստացել է հետևեալ հեռագիրը. «Ի նկատի ունենալով խօլերայի այն երեք դէպքերը, որոնք տեղի ունեցան պարսկական Աստարայում, Շահի կառավարութիւնը Էնզելիում հաստատել է կարանտին Աստարայից եկւորների համար: Բարեհաճեցէք կարգադրել այդ մասին տեղեկացնելու բոլոր նաւային ընկերութիւններին, յայտնելով որ կարանտինից խուսափելու համար նաւերը չը պէտք է Աստարա մտնեն»: Այդ հեռագրի մասին քաղաքապետը յայտնել է նաւահանգստի պետին ի պատշաճ կարգադրութիւն:

◆ «Бак. Эхо» լրագրում կարդում ենք. «Նոյեմբ. 8-ին, ցերեկվայ ժամը $2^1/_2$-ին Վելիկօկնեաժեսկի հրապարակի մայթով անցնում էր պատուաւոր քաղաքացի Միրզա Սեմեօնօվիչ Դեմբօտը իր թիկնապահ Դաղեստանի շրջանի բնակիչ Օմար Հաջի-Սալեհ Հաջի-օղլու հետ, և երբ նրանք հաւասարվեցին «Бак. Эхо» լրագրի խմբագրութեան դռանը, մի քանի անյայտ չարագործներ նրանց վրա ատրճանակներից կրակ բացին: Գնդակներից մէկով Սալեհ Հաջի-օղլին վիրաւորվեց մէջքից և, հիւանդանոց տանելիս, վախճանվեց: Դեմբօտի գլխարկի մի մասը միայն ծակվել էր: Ականատեսների ասելով, չարագործները մի քանի հոգի էին, բայց կրակել էր մէկը: Երբ թիկնապահը ընկաւ, կրակողը վազեց Լալայեվի տան դուռը և «Գրանդ Օտէլ» հիւրանոցի նախասենեակով իջաւ բակը, որտեղից երկրորդ դռան միջով դուրս եկաւ Վրանգելսկի փողոցը, ուր, միանալով իր սպասող ընկերների հետ, խառնվեց ամբոխի մէջ և նրանց հետ միասին անյայտացաւ, չը նայելով նրա ետևից ընկած քաղաքապահների հետապնդելուն:

Նոյն օրը, համարեա միևնոյն տեղում, Վելիկօկնեաժեսկի հրապարակում, առաջին սպանութեան տեղի դիմաց, երեկոյեան ժամը 6 և 15 րօպէին կատարվեց երկրորդ սպանութիւն, որի շարժառիթը, ինչպէս և առաջինի, անյայտ մնաց: Արշակ Պետրովիչ Գեօդակօվի ոսկեղէնի և ադամանդների խանութը, որ գտնվում է Վելիկօկնեաժեսկի հրապարակի վրա, «Մետրօպօլ» հիւրանոցի ներքևը, առած ժամանակը մտան երկու անյայտ չարագործներ, ըստ երևոյթին տեղացիներ, և մտան «դախլի» ետևը. խանութպան Գեօդակօվը սկսեց դուրս քաշել մտնողներին, բայց այդ ժամանակ նրանցից մէկը գրպանից հանեց ատրճանակը և Գեօդակօվի վրա կրակեց երկու անգամ, որից նա իսկոյն տեղն ու տեղը սպանվեց: Կատարելով սպանութիւնը, չարագործները, ձեռք չը դիպցնելով խանութին, կրակեցին դարձեալ մէկ անգամ առաստաղի վրա և դուրս եկան փողոց, ուր նրանց սպասում էին կրկին երեք ընկերներ: Աղաղակների և կրակոցների ձայնին խանութ շտապեց մօտից անցնող քաղաքապահը, որը ընկաւ չարագործների ետևից, կրակելով նրանց վրա մի քանի անգամ, բայց մթութեան և փողոցում գտնվող ահագին բազմութեան շնորհիւ չարագործները անյայտացան, թէև պարզված է, որ նրանցից մէկը վիրաւորվեց: Սպանվածի դիակը ուղարկվեց անատոմիական հիւանդանոցը: Նրա ստացուածքի վրա նշանակել են զինւորական պահպանութիւն»:

◆ Բագւում, ոստիկանապետ Պիստովի սպանութեան գործը, որ նշանակված էր երէկ, համաձայն քաղաքապետի կարգադրութեան, քննվեց դռնփակ: Հետևանքի մասին կը հաղորդենք գալիք անգամ:

◆ Ինչպէս հաղորդում է Бак. Эхо» լրագիրը, նոյեմբերի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին, հինգ չարագործներ մահափորձ են կատարել բագուեցի յայտնի վաճառական Իւսիֆ Դաղաշէվի կեանքի դէմ: Նրանք ծանր կերպով վիրաւորում են Դաղաշէվին պարանոցից, որից այնքան արիւն է հոսում, որ Դաղաշէվը ուժասպառ է լինում: Նրան անզգայ տանում են հիւանդանոց: Նրա կեանքը վտանգի մէջ է: Չարագործներից մէկը ձերբակալված է:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 11-ին, առաւօտեան մօտաւորապէս ժամը 10-ին, անյայտ մարդիկ մտնելով Վանքսկիյ պերէուլօկի տուն № 12-ը, Յակոբ Զաքարեանցի բնակարանը, տանում են բնակարանում եղած իրերը, 15 ր. փող և ոսկեջրած զօտին արժողութեամբ 50 ր.: Հարևանները թէև այդ ամենը տեսնում են, սակայն չեն կասկածում, թէ իրեր տանողներն օտարներ են, ուստի չեն էլ արգելում. միայն յետոյ է պարզվում գողութիւնը: Առ այժմ գողերը յայտնի չեն, թէ ովքեր են:

Նոյեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 9-ին, չորս չարագործներ մտնելով Մալայա Վանքսկայա փողոցում գտնվող Սաֆար Կարապետեանցի փուռը՝ բռնի կերպով յափշտակում են օրվայ եկամուտը՝ 50 ր. և բացի դրանից տանում են երկու արծաթէ ժամացոյց: Լուրերին նայած՝ չարագործները Մուխրանսկի փողոցում վխտող շանտաժիստներն են: Առ այժմ չարագործները անյայտ են:

ՈՐՏԵ՞Ղ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 9 նոյեմբերի

«Նոր-Ալիքի» № 6-ում և «Կովկասի Առաւօտի» № 36-ում Հերմէսի գրաշարները և տպարանի միւս բանւորները թխված բողոք էին յայտնել մեզ՝ «Մշակ» լրագրի գրաշարներիս վերաբերմամբ այն պատճառով, որ կաթողիկոսի թաղման օրն աշխատել ենք:

Այդ օրը դաշնակցական բոլոր բանւորները, նրանց թւում և մեր գրաշարներից երկուսը (Դաւիթ Սարգսեանց և Մնացական Ամիրջեան), գործադուլ էին յայտարարել ի յիշատակ «յեղափոխական Հայրիկի»:

Այդ թխված բողոքի տակ ստորագրել են տուել մի քանիսին, նոյնիսկ սպառնալիքների ազդեցութեան տակ: Այդ պարոններից մէկը դեռ դրանով չէ բաւականացել. նոյն գիշերը գինետնից 4 արբած երիտասարդներ է ուղարկում, որտեղ ինքը հէնց «կոնծելիս» է եղել, որոնց պատուիրել է թոյլ չը տալ «Մշակի» տպագրութիւնը: Բայց երբ նրանց հարցնում են, թէ «ո՞վ էք, որ չէք թոյլ տալիս տպագրել», նրանք պատասխանել են, թէ՝ «գնանք և կիմանաք»: Ի վերջոյ մեր ընկերներից բարոյական «դասեր» առնելով հեռանում են:

Մենք, «Մշակի» գրաշարներս, Հայրիկի նախկին գործունէութիւնը համարելով մի ժողովրդասէր, պրօգրեսիստ գործունէութիւն, որ սակայն, ոչ մի կապ և առնչութիւն չէ ունեցել նրա ներկայ դիրքի հետ և արդէն վաղուց յանձնված է պատմութեան,—մեր սկզբունքային տեսակէտով երբեք չէինք կարող այդ օրը գործադուլ յայտարարել, որովհետև յարգանքը մենք ուրիշ կերպ ենք հասկանում:

Պարզենք մեր տեսակէտը:

Իրանց սօց.-յեղ. յորջորջող դաշնակցականները այսօր կրկին ու կրկին եկան ապացուցելու, որ ոչ մի առնչութիւն ունենալ չեն կարող սօցիալիզմի հետ:

Զարմանալի ճարպիկութիւն ունին պարոնները:

Ե. Թոփչեան իր ճառի մէջ մեծ ապլօմբով յայտարարում էր մաղթանքի օրը, որ «Հայրիկը աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանն է, որ նա սօցիալիստ է...»: Գ.

Խմբակը բացականչում էր. «Հայ ազգ, մեռա՜ւ քո կէսը...»: Ինչի՞ն վերագրել այս խօսքերը. ենթադրե՞մ թէ մի այլ հանգամանքի...

Դաշնակցութիւնը մինչև այսօր չէ եղել հետևողական սօցիալիստ. բացառութիւնները ուրիշ են: Դաշնակցութիւնը դեռ սրանից մի քանի տարի առաջ չէր ընդունում, թէ հայ բանւորութիւն գոյութիւն ունի: Դրա համար ևս երկար գլուխ ցաւեցնել չարժի:

Հայ ազգ և աշխատաւոր դասակարգ, աշխատաւոր դասակարգ և յանկարծ... հոգևոր պետ: Սրանք այնպիսի անլուծելի տարրեր են, որոնք կարողանում են լուծվել և մի յայտարարի բերվել միմիայն դաշնակցականների ֆրազէոլօգիայով: Դեռ մի կողմ թողնենք «աշխատաւոր դասակարգի»՝ որպէս այդպիսի տերմինի մանր-բուրժուական և հետևապէս բէակցիօն բնոյթը:

Հայ ազգը, որպէս մի ամբողջութիւն, երբեք ոչ մի կապ չէ կարող ունենալ «աշխատաւոր դասակարգի» շահերի հետ: Դեռ մինչև այսօր ամենատարրական հասկացողութիւններն անգամ անըմբռնելի են դարձել մեր quasi սօցիալիստների համար:

Ակամայից մարդ բացականչում է. հոգևորականութեան գլուխ և սօցիալիստ: հոգևորականութեան գլուխ և յեղափոխական: Ո՜հ, չար լեզուներ. գուցէ սա էլ մի նոր տեսակի սօցիալիստական գործունէութիւն է:

Խ.-Ազատ և ուրիշները «Մշակում» և այլ լրագիրներում շատ լաւ պարզաբանում են Հայրիկի յեղափոխական լինելու մասին: Բարի եղէք, պ. պ. դաշնակցականներ, կարդալու այդ յօդուածները, որտեղ Հայրիկի յեղափոխական լինելու մասին և ոչ մի խօսք լինել չէ կարող, առաւել ևս՝ սօցիալիստ լինելու մասին:

Շատ տեղին է այստեղ առաջ բերել կ. Մարկսի «Յեղափոխութիւն և կօնտր-յեղափոխութիւն» գրուածքից մի պարբերութիւն, որը շատ է յարմարվում դէպքին: «47 Թւականների վերջերը,—ասում է կ. Մ.-ը,—Գերմանիայում չէինք գտնի գէթ մի քաղաքական գործիչ բուրժուազիայի մէջ, որը չը յայտարարէր իրան սօցիալիստ, պրօլետար դասակարգի համակրանքը ապահովագրելու համար»: Իսկ և իսկ դաշնակցականները նոյն գործելակերպին են հետևում, բանւորասիրութեամբ խաբելու համար իրանց շարքերը: Յետոյ շարունակում է նոյն պատկառելի հեղինակը. «Սիստեմի վրա կպցրած ապրանքանիշներն (этикети) այն տարբերութիւնն ունեն առարկաների վրա կպցրած ապրանքանիշներից, որ նրանք խաբում են ոչ միայն գնողին, այլ և իրան՝ վաճառողին»: Դաշնակցական մասսայական կազմակերպութիւնը յայտարարելով իրան սօցիալիստական՝ դրանով խաբում է ոչ միայն իրան կուրօրէն հետևող բանւորներին, այլ և ինքն իրան:

Դա դեռ բաւական չէ:

Այսօր նա ոչ միայն սօցիալիստական չէ, այլ հանդիսանում է հոգևորականութեան, կղերականութեան և ուրիշ բէակցիօն տարրերի ֆանատիկ երկրպագուներից մէկը:

Տիրացու-սօցիալիստ: Ահա այն անունը, որ մենք կարող ենք տալ այդ մարդկանց:

Վերջացնելով մեր պատասխանը և ցաւելով որ լրագրի սուղ էջերը թոյլ չեն տալիս մեզ աւելի մանրամասն ծանրանալու այս խնդրի վրա, մենք միայն կարող ենք ցաւել, որ դաշնակցական բանւորները իրանց ազատութիւնը միայն հանդէս բերեցին այդ «բողոքով»:

Մենք լի հաւատով կը սպասենք այն ժամանակին, երբ բանւորները կը հասկանան իրանց պատմական միսիան, երբ այդ «երկրորդ աշխարհի» խորթ զաւակները կըմբռնեն իրանց դասակարգային շահերը, և, գիտակցութեան ճառագայթներն ու սերմերը ընկնելով նրանց մէջ, մի րոպէ անգամ չեն մնայ այդ՝ խայտաբղէտ տարրերից կազմված կազմակերպութեան մէջ, չեն թխի իրանց ընկերների դէմ անմիտ բողոքներ, որոնք վարկաբեկ են անում իրանց հեղինակներին:

Սպասենք և կը տեսնենք:

«Մշակ» լրագրի գրաշարներ՝

Գէորգ Խաչատրեան, Արտեմ Ստեփանեան, Սարգիս Սաղոյեան, Գերասիմ Բայանդուրեան, Կարապետ Խառատեան, Գիգօ Տէր-Առաքելեան, Լեւոն Յակոբեան-Վելումեան, Միքայէլ Պարունակեան, Գէորգ Պապօվեան, Սանդրօ Հայրապետեան:

Տպագրիչներ՝

է. Շաւաշվիլի, Մ. Դարչինեանց

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Ներքին

9 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հէնց որ ստացվեց Կարադաղի դժբաղդութեան լուրը, անմիջապէս գործակալութիւնս Սամարղանդից Կարադաղ ուղարկեց տեղին և տեղական լեզուներին քաջ ծանօթ մի անձի, իբրև յատուկ թղթակցի: Ճանապարհի վերին աստիճանի դժուարութեան պատճառով, պէտք է գնալ ձիով լեռնային շաւիղներով: Մեր թղթակիցը հոկտեմբերի 31-ին հասաւ միայն Իքսա, որ գտնվում է Կարադաղից 104 վերստ հեռաւորութեան վրա: Այդտեղից էլ նա ուղարկեց հետևեալ հեռագիրը. «Կարադաղից փախածները հաղորդեցին, որ հոկտեմբերի 8-ին, առաւօտեան ժամը 9-ին, ստորերկրեայ ուժեղ հարուածով Կարադաղը մի կողմը նետվեց և իսկոյն փլատակների փոխվեց: Ի միջի այլոց քանդվեց Մեդրեսէի հսկայական շինութիւնը: Բացի հարուածի ույժից, կործանվելուն շատ նպաստեց այն հանգամանքը, որ քաղաքի շինութիւնները շինված էին քարից, հազիւ ամրացրած կաւով: Կորան 3—4 հազար հոգի, ազատվեցին միայն նրանք, որոնք այդ րոպէին բացակայ էին քաղաքից. դրանց թիւը 100-ի է հասնում: Բացի Կարադաղից կործանվել են հարևան «ղշլաղները», որոնք ընկած են մօտ 10 քառ. վերստի վրա: Զոհերի ընդհանուր թիւը պէտք է հաշւել մօտ 10,000 մարդ»:

ԵԱԼՏԱ: Դեկտեմբերի 1-ին այստեղ բացվելու է առաջին (Ռուսաստանում) կլիմայական կայարանը աղքատ հիւանդների համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց՝ Մոսկվայում դեկտեմբերի 28—31-ին գումարել կին բժիշկների և մանկաբարձուհիների ռուսաց ընկերութեան 11-րդ հերթական համագումարը:

Դեկտեմբերի 10-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստրը գումարելու է բոլոր համալսարանների ռեկտօրների համագումարը՝ համալսարանների գործերի մասին խորհրդածելու համար:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը հրահանգագրով առաջարկեց անուշադիր թողնել համալսարանների ուսանողների միջնորդութիւնը, որ նրանց թոյլատրվի միաժամանակ դասախօսութիւններ լսել երկու ֆակուլտէտներում:

Արտաքին

9 նոյեմբերի

ԼՈՆԴՈՆ: Հրատարակված է, որ ռուսաց դեսպան կոմս Բենկենդորֆին շնորհվում է Վիկտօրիայի շքանշանի մեծ խաչ, իսկ դեսպանատան խորհրդական Պօկլէվսկի Կօզէլին՝ Վիկտօրիայի շքանշանի կօմանդօրի (բարձրագիր աստեղի) խաչ՝ պարանոցից կախելու համար: («Ռ.»)

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկհատ.:

Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.:

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան:

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
պտղատու ծառեր եւ տունկեր
Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ ԱՅԳՈՒՑ
Դիմել՝ քաղաք Գօրի, Կ. Աֆրիկեանցին. և Թիֆլիսում շերամապահական կայարան պ. Պրեւլեպկօյին: Ցուցակներն ուղարկվում են ձրի:
(ու. ե.) 2—4

Նոր լոյս տեսաւ եւ վաճառվում է
Կ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻ
ՋՐԿԱՆՔԻ
ՅՈՅՁԵՐ
(Պատմուածքների և պատկերների ժողովածու) 214 երես, մաքուր թղթի վրա տպված,
ԳԻՆՆ Է 50 Կ.
Գլխաւոր պահեստը Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցում և «Փարոս» քեօշկում:
(կ. ե. հ. շ.) 2—4

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել և վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ բկի, քթի և ականջի հիւանդութիւնների համար:
Առաւօտները — երկուշաբթի, չորեքշ. և ուրբաթ—11-ից մինչև 1 ժամը:
Երեկոները—ամեն օր—5-ից մինչև 7 ժ.:
Հասցէն՝ Вельяминовская ул. № 3.
(հ. կ. ե.) 7—10

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց ա. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 34—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց, № 16:
(ու. կ. ե.) 28—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
և վաճառվում են
„ԱՐԱՔՍ“
1908 Թ.
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
հետաքրքիր և հարուստ բովանդակութեամբ:
Գները՝ պատինը արժէ 40 կ.
ծոցինը » 20 կ.
Դիմել՝ Александрополь, типографія Санояна. Թիֆլիսում պահեստը գտնվում է «Փարոս» գրախանութում Նիկ. Մատինեանի, Эрив. площадь. Գումարով գնողներին ձեռնտու պայմաններ:
(ե. հ. կ.) 26—3

ՀԱԶԻՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ!
միայն 2 ր. 50 կ.



Ուղարկում եմ վերադիր վճարով, առանց կանխավճարի, իսկական ամերիկական կարի մեքենայ տարվայ գիւտի, 3 վերջին երաշխաւորութեամբ: Նոյն տեսակի մեքենայ մեծ դիրքով, գինը միայն 4 ր. 25 կ. և 6 ր. 50 կ.: Իւրաքանչիւր մեծ մեքենայի հետ ուղարկվում է բոլորովին ձրի. 1) շրաուբշտոկ, 2) թել, 3) պտուտակահան գործիք, 4) կարելու համար ասեղներ, 5) ձիթաման և 6) ձեռնարկ: Պահանջները խնդրեմ ուղարկել՝ Ш. КУЛЬВАРСКОМУ, Варшава, Холодная, № 17. Պատկերազարդ պրէյսկուրանտ Զինգերի սիստ. կարի մեքենաների (կրկնակի էժան բոլորից) ուղարկում եմ ՁՐԻ:
(հ. 31, ն. 13, 27, դ. 12) 4—2

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են
ԱՏՐՊԵՏԻ
աշխատութիւններից

Պատկերներ.—Տասը Պատ. Թիւրքահայերի կեանքից	1 ր. — կ.
Վիւճալայի գաղտնիքը.—Օսման. սահմանադ. երիտաս. կեանքից	1 » — »
Ալմաստ.—Ա. հատոր Թիւրքահայերի կեանքից	1 » — »
Զաւահիր.—77—78 Թ. Ռուս-Թիւրք. կռուից արկածներ	1 » — »
Վիպակներ.—Երկու վէպ. (Հարգատ և Աննկուն) Թիւրքահայերի կեանքից	1 » — »
Բժժանքներ.—Երեք պատկեր. տաճկահայ յեղափ. կեանքից	1 » — »
Կարելի՞ է սիրել—պատմ. վէպ	1 » — »
Ընտիր թղթի վրա սոյն ութ հատոր իւրաքանչիւր հատ. 2 ր.	
Դիմակներ.—Երգիծական չորս արկած.	— 50 կ.
Խեւ-կարապետ.—Թիւրք. կեանքից	1 » — »
Քօռ-Եղիկ » »	— » 30 »
Շինենց » »	— » 30 »
Ժառանգներ » »	— » 30 »
Բերսաւ-Առաքելը » »	— » 25 »
Թուլումբաջիներ » »	— » 20 »
Շուշան.—Երեք արար. Թուրք. կեանքից	1 » — »
Սառրաֆ.—Հինգ » » »	30 » — »
Խիւլաֆար.—Պատմ. տեսութիւն	30 » — »
Իմամար.—պատ. տես. շիրգմի ժամին	1 » — »
Հողատիրութիւնը Կովկասում	» 10 »

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառ. Գ. Գալստեանին:
3—5

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ:
Միքայէլեան փողոց, № 27:
(ե. հ. շ. կ.) 24—50

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33:
(ա. օ.) 45—100

Զգուշացէ՛ք կեղծումներից

САНТАЛЪ
МИДИ

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(Թոյլատրված Ռուսաստանում)
Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդին, պերելօյի (հօնօրրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար:
Սանտալ Միդիի յատկութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը թոյլատրում են գործածել առանց վնասելու մարսողական գործարաններին:
Պահանջէ՛ք գրված լինի „Midy“ MIDY
Պահեստը Ռուսաստանի գլխաւոր դեղատներում.
(շ. 1 ան. ե.) 25—1

ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ
Գրական, քաղաքական և հասարակական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
առաջին 1907 թ. տարի
Առաջին համարը լոյս կը տեսնի կիրակի, 11-ին նոյեմբերի:
Առանձին համարը Թիֆլիսում և թէ գաւառներում—10 կոպ.
Տարեկան բաժանորդագինը ամեն տեղ 4 ՌՈՒԲԼԻ
Խմբագրութիւնը բաց է ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան ժամը 11-ից մինչև 2-ը: Խմբագրութեան ժամանակաւոր հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «Норъ-Ашхаръ», Водоподъемная ул. № 8 (Чугуретъ)
Խմբագիր-Հրատարակիչ՝ Գրիգոր Ճէպէյեան
(ու. շ. կ. ե.) 4—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Կարապետ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ
1908 Թ.
„ՇԻՐԱԿ“
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
(Տասներորդ տարի)

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ զարդարված է Խրիմեանի, Նազարեանի, Չերազի և Մառի գունատիպ պատկերներով, պարունակում է ընդարձակ վիճակագրութիւն երկրագնդի, գրագիտութիւնը, պարբերական թերթերը զանազան երկիրներում: Պետութիւնների ծախսերը և զինւորական ծովային ու ցամաքային ույժերը: Ռուսաստանի ազգութիւնները, դպրոցները, վանքերը, վանականների ռոճիկները: Մուրհակների օրէնքներ և օրինակներ, չափ, կշիռ, դրամներ: Դրոշմաթուղթ, բնակարանի հարկ, վարձատրութիւն նոտարների, դատական պրիստաւների, երդ.-հաւատարմատարների: Պօստ և հեռագիր. խնայողական գանձարաններ: Զինւորագրական օրէնքներ, նորակոչ զինւորների չափը: Անցագիր և բողոքելու ատեաններ: Հարուստ բժշկարան, առողջապահական խորհուրդներ: Ինչից ստեղծվեց աշխարհը, երբ կը վերջանայ աշխարհը: Հայկական հարցը 1878 թ. Բերլինի վեհաժողովը, Սանստեֆանօի 16-րդ և Բերլինի 61-րդ յօդուածները. ինչ շահեցինք Եւրոպայից: Անիի գաղթականութիւնը դէպի Լեհաստան, Նիկօլ Թորոսօվիչ, 300,000 հայերի վիճակը և վախճանը Լեհաստանում: Անիի նոր պեղումները—պրօֆ. Մառ: Ճորտերի ազատութիւնը Ռուսաստանում, գիւղացիական շարժումներ: Զօրքը Անգլիայում: Կենսագրութիւններ՝ Խրիմեան Հայրիկ, Մինաս Չերազ, Ս. Նազարեան—«Հիւսիսափայլի» 50-ամեակը: Ճանապարհորդական—երկաթուղի, շոգենաւ, կառքեր: Երգարան—Քուչակի և Հաֆըզի սիրոյ երգերից: Հանելուկներ, ռեբուսներ և զուարճալի վիճակարան:

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր, աֆորիզմներ, հարուստ ժամանակագրութիւն և բանաստեղծական փոքրիկ հատուածներ. եկեղ. և ազգային տօների պատմական բացատրութիւններ, զանազան հեթանոսական սովորութիւններ, գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների բացատրութիւններ, առողջապահական, բժշկական խրատներ, արհեստների վերաբերեալ օգտակար գիտելիքներ, ճապօնացիների, հնդիկների, հաբէշների և քրդերի կեանքից զուարճալի պատմութիւններ, պատմական նշանաւոր դէպքեր հայկական, ռուսական և եւրոպական կեանքից, հետաքրքիր թւեր և տեղեկութիւններ, ինչպէս են ծախսվում հասարակական գումարները, զինւորական ույժ և պատերազմական ծախքեր: Հողը Ռուսաստանում, ում ձեռին են հողերը: Ազգային քնար—նորագոյն բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր—սիրոյ երգեր Քուչակի և Հաֆըզի, հետաքրքիր տեղեկութիւններ բուսական և կենդանական աշխարհից, թռչունների և կենդանիների հետաքրքիր կողմերը, կենսագրութիւններ, զուարճալի դէպքեր մեծ մարդկանց կեանքից: Ժողովրդական առածներ, երգեր, լէլէներ, զուարճալի ՆՈՐ ԱՌԱԿՆԵՐ, տնային տնտեսութեան վերաբերեալ կարևոր խրատներ, խոհարարական խորհուրդներ, հանելուկներ, շուտասելուկներ, վիճակներ և այլ զուարճալի տեղեկութիւններ:

Տախտակը բազմաթիւ գոյներով, լիտօգրաֆիայում պատրաստված մի շքեղ նկար է՝ «Մանուկ Հայաստան», հայրենի աւերակների մէջ նստած մայրը ցոյց է տալիս մանուկին դէպի Մասիսը, ապագայ ճառագայթող արշալոյսը, միւս կողմից Շիրակի աշխատաւոր հայ կնոջ ոգին՝ տարվայ բերքը—հասկեր է ձօնում:

Գները՝ պատինը— 40 կոպ., ծոցինը—15 կոպ., գումարով գնողներին զեղչ:

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“, Карапету Апинянцъ. Արտասահմանից—Alexandropol, Karapet Apinian (Caucase)

Ալեքսանդրապօլում չը դիմել ուրիշ ոչ մի հասցէով: (ու. ե.) 2—8

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

19 նոյեմբերի (2-ին դեկ. նոր տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, „Bagdad“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէլ, Հավր և Լօնդօն:

Տոմսակների վաճառումը ճանապարհորդների համար ժամանակաւորապէս դադարեցրած է, Բաթումից գնացողների դէմ Տաճկաստանում քարանթին նշանակվելուն համար:

Ապրանքների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյայում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և 5—6-ը երեկոյեան ամեն օր, բացի կիրակի օրերից: (ե.) 1—1

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мутдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.